

ՆՈՎՀԱՆՆԵՍ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԵՅԻ ՆԵՐՔՈՂՆԵՐԸ

Այս հեղինակի մասին կենսագրական փորձություններ չեն հասել: Ամենայն հավանականությամբ եղել է Նուսկան որդի Սյունիանուսի աշակերտը, ինչը նշանակում է, թե ծնվել է Վասպուրականում¹ ԺԳ դարի կեսերին և ապրել թերևս մինչև ԺԴ դարասկիզբ: Նովհաննեսի «Աշխարհի երեց» պարվանունը ցույց է տալիս, որ նա ըստ երևույթին եղել է շրջիկ քահանա, զբաղվել քարոզչական գործունեությամբ: Օժտված է եղել գրելու ակնհայտ շնորհքով: Այս մասին են վկայում Նովհաննես Աշխարհի երեցի անունով մեզ հայտնի Ս. Խաչին, Աստվածածնին և իր ուսուցչին՝ Սյունիանուսին նվիրված ներբողները: Սրանց մեջ երևում է հայ ներբողագրության դարավոր ավանդներին քաջաբեղյակ մատչելիությունը: Միջնադարյան շարժականների պես² Նովհաննեսը Ս. Խաչին նվիրված ներբողը շարադրելիս աչքի առջև է ունեցել Դավիթ Անհաղթի նշանավոր «Բարձրացուցեք»-ը: Այդ են մատչելի անուն հերկայ գուգադրումները.

Դավիթ

Յորոյ վերայ հասանելով յերկրի երկնայինն Ադամ
Յթաճարար զփրկութիւն կամեցեալ նորագործել
աստ թողեցելոյ ծառային և հաւր զյախորհական
բարձեալ բերել զարդարութիւն նմանասէր մարմնով
լուծանելով աստ զնորա հաճեալ զմեղսն և
ճաշակելով իբր նայապէս զմահ սպանանելով
զնորայն մահ...
«Մատենագիրք Նայոց», Զ, էջ 1023-24 (75)

Օրհնեալ ես փայր կենաց, իմանալի սանդուխթ
յերկինս ի վեր ճանապարհորդութեան, որով
գուարթնոց դասուց յերկիր յար էջ և էլք արարան
և Տէր ի քեզ հասարարեալ, զոր ի բացուստ փեսեալ
սրբոյն Յակովբայ և յսին ըմբռնեալ հրաշիցն յինքն
ստակացեալ ստուգապէս, դուռն երկնից գրծ վայր և
փուն Աստուծոյ զԲեթել անուանել:
Անդ, էջ 1025 (99)

Օրհնեալ ես, աստուածագարդ փայր սուրբ կամ
ճշմարտապէս փունկ, որ զի քէն կախեցելոյ Սաբէկայ
գառամբն ոչ միայն Բասիակ ի մահուանէ փրկիւր, այլ
միանգամայն համարէն ծնունդք Ադամայ...
Անդ, էջ 1025 (91)
Անդ, էջ 1026 (103)

Յովհաննես

... ի լրման ժամանակի գայ անժամանակն Աստուած
մերոյին բնութեամբ ի չարչարանս մահու Խաչին և
յանձն առնու զանէծս աղամեան մարմնոյն և ըմպել
նայապէս զմահու բաժակ...

Դու փայր սուրբ բարձրացար բա-րութեամբ քան
զերկինս երկնից: Դու գրկապարեալ ունիս զճագս
փրկեղբաց, զքեզ նմանեալ սանդուղ փեսեալ
երջանկին Յակովբայ ասէր էջ հրեշտակաց և էլք
մարդկան ի յերկինս և Տեառն հասարարութիւն: Դու
վեմն իողական, զոր առեալ Յակովբայ ած իողովն
արինութեան և կոչեաց զքեզ Տուն Աստուծոյ...

Դու փայր սուրբ չքնաղ և զարմանաւոր, որ ունիս
կախեալ յԱրարիչն ի դիտակ ոստոցդ, որպէս ծառն
Սաբէկայ՝ զխոյն յեղջերացն...

1 Ելնելով Նովհաննեսի երկերը պարունակող ՄՄ 731 ձեռագրի ընթերցումներից (Խորդեաց-
հորդեաց, հոսեցեր-խոսեցեր, նախապէս-նախապէս, սպիտակ երանկ-սպիտակ երանգ, ընդդական-
ընդդական, հանկիսար-հանգիսար և այլն պէտք է ենթադրել, որ կթն ոչ գրիչը, ապա հեղինակն
իրապէս վասպուրականցի է (տես **Գ. Տեր-Մկրտչյան**, Նայագիտական ուսումնասիրություններ, Ա,
կազմ. և խմբ. Պ. Ն. Նակոբյան, Էմ. Ա. Պիվազյան, առաջաբանը և ծանոթ. Պ. Ն. Նակոբյանի, Եր.,
1979, էջ 192, փողարակ): Ի դեպ, իբրեւ գրչական առանձնահատկություն նկատվում է յ կիսաձայնի
բացակայություն երկու ձայնավորների միջեւ. օր.թին., արքաական և այլն:

2 **Ն. Ն. վ. Ալիսնան**, Դավիթ Նարբացի Անյաղթ փիլիսոփա, Վիեննա, 1959, էջ 126. **Ն. Բյուսեյան**,
Աստվածաբանական բնագրեր, Ուսումնասիրություններ, Ա, Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին,
2000, էջ 23-27:

Օրինեալ ես փայր կենաց, իմանալի փայտան, որ ի հեղձական ծովէս ի քեզ աժընդակեալ ոգոց, գերագոյն ծփական ալեաց մերձ առ երկին թեթեւ թռուցեալ վերաբերիս...:

Անդ, էջ 1025 (96)

Օրինեալ ես, փայր սուրբ, որ նախանկար ի քո խորհուրդս նեղիչ ախարին փանջեցելոյ սաստիկ, որ յԵգիպտոս գառնագէն արիւնաշաղախ դարբն...անդրանիկքն փրկին Բարայելի:

Անդ, էջ 1025 -26 (100)

Օրինեալ ես, քրիստոսապաշակեալ փայր սուրբ, որ յերկրի բուսանելով, գերագոյն երկնից կամարացն ծայր արձակեալ բարձրացար...:

Դու փայտանակ ապրեցուցի՝ յարինակ Նոյեան փայտանին ի մրրկեալ ալեաց յաշխարհական մեղաց ծովէ:

Դու նկարեցար դրոշմամբ ի վերայ սեմոց ի դրանցն մովսէսեան ժողովոյն, որով ապրեցան յանդրանկածախն սաքակմանէ:

Դու գերագոյն քան գերկինս երկնից: Դու բարձր քան գկամար վերինն երկնի:

Բնագրային նույն հարաբերակցությունը նկարվում է Պերրոս Սյունեցու եւ Հովհաննես Երեցի՝ Աստվածածնին նվիրված ներբողներին մեջ: Դրանում դյուրությամբ կարելի է համոզվել համադրելով հետևյալ հարվածները.

Պերրոս Սյունեցի

Ուրախ լեր, Մարիամ, առաւար գեղեցիկ, յորում խաղաղութիւնն մեր զարմանալի յարինմամբ արար գերկոսինն մի, եւ ըստ սրբոյն Զաքարիայ արեգակնաբար ի մէջ ծագեցաւ՝ փարսբել գխաւար մեղաց:

Արդ, զի՛նչ եւ այլ արիւնակաց ի մէջ առեալ սուրբ Աստուածածնիդ կարասցոյք ընծայել:

«Ընդրանի հայ եկեղեցական մարտնագրութեան», Ս. Էջմիածին, 2003, էջ 169:

Ուրախ լեր, Մարիամ, պարբեզ փակեալ, որ զբազմաբեր ծիթենին վերընծիւղեցեր...

Անդ, էջ 168:

Ուրախ լեր, Մարիամ, սափոր ոսկի, որ ոչ զմահկանացու ընչընչուկն կրեցեր, այլ զանմահացուցիչ կերակուրն, զոր աստուածեղէն բերանն հրապարակեալ ասէ. «հարքն ձեր կերան զմանանայն յանապարին եւ մեռան, իսկ որ զմարմին իմ ուրէ՛ մի՛ քնեցէ յափեան:

Անդ, էջ 167:

Ուրախ լեր, Մարիամ, դրախտ աստուածաբունկ...

Անդ, էջ 166:

Հովհաննես Երեց

Դու առաւար խաղաղութեան ծակաւ լուսոյն անճառական, քանզի ո՛վ որ ի սրեղծականացս բառականացի բանասրեղծական գովեստի բան գովութեան ընծայել երկրպագեալ մարդ...

Դու առաւար խաղաղութեան, որով ծագեցաւ լոյսն եւ փարապրեցաւ մթացուցիչ...:

Դու պարբեզ ամրափակեալ ծաղկին ծիրանոյ...

Դու սափոր ոսկեղէն մանանային իջելոյ...

Դու դրախտ աստուածական ցանկեալ ի յարիւոյ...

Նվազ ուշագրավ չէ Հուսկան որդի Սարգիստիսին նվիրված ներբողը, որ երախտիքի մի քուրք է երանելի ուսուցչի սուրբ հիշատակին: Այն շարադրված է արեւելաքրիստոնեական ներբողագրությամբ հաբուկ դրվաբով հարկանիշների ծայրահեղ բացարձակեցումով, հախտուն անմիջականությամբ: Հովհաննես Երեցի ներբողներում դրսևորվում է ոչ միայն քարոզիտական արվեստին կարարելապես փրապելորոջ բեմբասաց հովիվը, այլև Հայ Եկեղեցու դավանական մաքրությանը նախանձախնդիր վարդապետը: Ազգային Եկեղեցու դավանական դրվածքի, քրիստոսաբանության արձագանքները հստակորեն լսելի են հետևյալ արտահայտություններում. «Աստուած խաչեցաւ՝ մահ լուծաւ: Աստուած խաչեցաւ՝ մահ կործանեցաւ: Աստուած խաչեցաւ՝ սաքանայ կապեցաւ...», «ամենայն Աստուած անծախապէս ի Բեզ միշտ պարարագի՛ թերի մարդկութեամբ եւ անպակաս

Աստուածութեամբ» (Խաչ.), «Սա ստուգապէս Մայր անսկզբնական Բանին Նար, զոր ծնաւ անսկիզբն Նայր... եւ ի Մարէ ծնաւ անհայր Աստուած ճշմարիտ եւ Մարդ կապարեալ, եւ նոյն ինքն անեղ ընդ Նար հանդերձ առեցելովն» (Աստուածածին):

Զուգադրումը ցույց է տալիս, որ Նովիաննես քահանան սրեղծագործաբար օգտւել է Դավիթ Անհաղթի ներբողից: Ս. Խաչը հարկորոշող այլաբանական պարկերների մի զգալի մասն իր հղացքի մեջ անուղղակիորեն գալիս է այդ ներբողից:

Նովիաննես քահանայի ներբողներն աչքի են ընկնում հոկտորական պետականության, համեմատությունների, այլաբանական պարկերների ճոխությամբ, նյութի նրբին, խնամյալ աստվածաբանացմամբ: Ընթերցողի վրա առավելագույնս ներագոյելու նպատակով հեղինակը սրեղծում է նորանոր, բազմաբարդ բառամիավորներ: Դարելով օգտագործված գրականության ցանկից՝ Նոր Նայկազյան բառարանի հեղինակները ձեռքի տակ չեն ունեցել Նովիաննես քահանայի խնդրո առարկա ներբողները: Այս է պարզապէս, որ դրանցում առկա բառազանձը տեղ չի գտել տվյալ բառարանում: Այդ բառամիավորներն են. աղենամարին (Սյրեփ), անստուերանելի (Սյրեփ), անուշանուագ (Սյրեփ), ամբծական (Խաչ), ամենաներանեան (Ածծին), արփիաշէն (Սյրեփ), Արքաթագատոր (Ածծին), բազմակսկիծ (Սյրեփ), բազմաշեղջ (Ածծին), բարձրանաւամ (Սյրեփ), բխրահապոյց (Սյրեփ), դիմաբան (Սյրեփ), երիսանձնութիւն (Ածծին), կենաքարոզ (Խաչ), կենագոչ (Սյրեփ), կենագծակ (Սյրեփ), հայառաք (Ածծին), հերկաւոր (Սյրեփ), հոգիամուխ (Սյրեփ), հրաշանիւթ (Սյրեփ), ձայնապարած(Խաչ), մահարան (Խաչ), մարգարէագոչ (Սյրեփ), մեզգական (Սյրեփ), յիստուականք (Սյրեփ), նենգահայեաց (Սյրեփ), նորագգեստեալ (Խաչ), ոսկեղիւրակ (Սյրեփ), պարեհական (Խաչ), սելովանման (Սյրեփ), տուսերապնդեալ (Խաչ), տիեզերահրաւեր (Խաչ), տիրաշէն (Ածծին), տիրընկալ (Սյրեփ), իղական (Խաչ), փրկչարեսակ (Խաչ), փրկչանորոզ (Ածծին), քաջաժողով (Սյրեփ), քոնակագմ (Սյրեփ), քրիստոսարեալ (Սյրեփ), ունկնամուխ (Խաչ):

Նովիաննես Աշխարհի երեցի ներբողները հրապարակվում են համաձայն մեզ հայտնի միակ ձեռագրի՝ ՄՄ թիվ 731-ի, որ ժողովածու է ժամանակ՝ 1345 թ.: Վայր՝ Դավրեժ: Գրիչ՝ Ներսէս երեց: Ստացող՝ Նորոզեա: Թերթ՝ 311: Նյութ՝ թուղթ: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 17³:

ՆԱԿՈՒՔ ՔՅՈՍԵՅԱՆ

3 Ձեռագրի գիտական նկարագրությունը տես Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մարենադարանի, հյր. Գ., կազմեց Օ. Եզանեան, խմբագրությամբ Փ. Անթափեանի, Յ. Քեօսեանի, Ա. Ղազարոսեանի, տ. Շահե քիյ. Նայրապետեանի, Եր. 2007, էջ 519-520:

ՆՈՐԻՆ ՄԵՂԱՊԱՐՏ ՅՈՂԱՆՆԻՍԻ ԱՇԽԱՐՀԻ ԻՐԻՑՈՅ
ԱՍԱՑԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ՆՇԱՆՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ, ՈՐ ԱՅԺՄՍ
ԿԱՅ Ի ՍՈՒՐԲ ՎԱՆՔՆ ԱՐԳԵԼԱՆԱՅ⁴

Աստանաւր յառաջ բերից զսկիզբն պարծանաց զամենայաղթն նշան տերունական եւ աստուածական, յորում բարձրացաւ արարչականն բազկաւք Աստուածն բոլորից անպակաս մարմնով եւ անթերի Աստուածութեամբ, Որդին անդրանիկ հաւր Արարչի մերունակ կերպիւ, կատարեալ անձամբ եւ զաւրութեամբ, գիտութեամբ եւ իմաստութեամբ, արարչութեամբ եւ բարերարութեամբ, ստեղծիչ եւ յաւրինիչ ամենայն գոյից, որպէս զՀայր եւ զՀոգի արարիչ եւ բարերար ոչ հեռացեալ եւ ոչ բաժանեալ ընտանի⁵ փառացն Հաւր, զոր խոստովանիմք Տէր եւ Արարիչ աւրհնեալ յաւիտեան, իսկ ի լրման ժամանակի գայ անժամանակն Աստուած մերոյին բնութեամբ ի չարչարանս մահու Սաշին եւ յանձն առնու զանէծս ազամեան մարմնոյն, եւ ըմպէ⁶ նայապէս զմահու գրաժակ, զոր ի պատճառս աստուածանալոյ մերկացաւ ի լուսատեսիլն փառաց, եւ փոխանակ կենսունակ եւ աստուածավայելուչ դրախտին զկեանս անիծաբեր եւ զմահ ժառանգեաց մինչեւ յաւրն, յորում ծագեցաւ մեզ արեգակն ի բարձանց եւ լուսաւորեաց գխաւար, մեր:

Արդ ի յայտ աստուածական տաւնիս, յորմէ տնկեցաւ ծառն բարեպտուղ ի վերայ գագաթան նախնոյն Ադամայ, այսաւր գրողմեալ անդ ընթանա մեծաւ ճոխութեամբ ի վերայ Հանգստարանի լուսափայլ վարդապետի սրբոյն Ստեփաննոսի, յորում յորջորջեալ կոչի Յուսկանն որդի:

Դարձեալ կրկնեցից զբանս գովեստական ընդդէմ լուսակիրն Սաշի՝ ի ձեւ մաղթանաց աղիողորմ ողբերգական պաղատանաւք թերեւս ընդ իս հաշտեսցի՝ ընդ կարկամեալս մեղաւք:

Եւ արդ, երգեցից բանս թէպէտ եւ այժմ եմ տարագրական.

Դու Փայտ սուրբ չքնաղ եւ զարմանաւոր, որ ունիս կախեալ զԱրարիչն ի գիտակ ոստոցդ, որպէս ծառն Սաբեկա՝ զխոյն յեղջերւացն⁷,

Դու փայտ սուրբ պաշտելի եւ երկրպագելի, որ ունիս զկեանս մեր, ըստ ձայնի Մովսէսի, կախեալ զփայտէ⁸,

Դու Փայտ սուրբ պատուելի եւ համբուրելի, յորում Աստուծոյ եղեր բարձաւղ, յորում Գառինն անմահի եղեր զենարան, յորում կենաց Հացին եղեր շտեմարան,

Դու Փայտ սուրբ տնկեցար ի գագաթն Ադամայ եւ զխրխայթեալ վերս նորայ ի բաց մաքրեցեր եւ զնայ վերստին փառաւարդեալ չքեղացուցեր,

Դու Փայտ սուրբ, տունկ անմահութեան, յորում խորագոյն ունիս զարմատս քան զանդունդս,

Դու Փայտ սուրբ բարձրացար բարութեամբ քան զերկինս երկնից,

Դու գրկապատեալ ունիս զծագս տիեզերաց, զքեզ նմանեալ սանդղոյ տեսեալ երջանկին Յակովբայ ասէր էջ հրեշտակաց եւ ելք մարդկան ի յերկինս եւ Տեառն Հաստատութիւն⁹,

Դու վէմն իւզական¹⁰, զոր առեալ Յակովբայ աւծ իւզովն աւրհնութեան եւ կոչեաց զքեզ Տուն Աստուծոյ¹¹,

4 Աղբյուր ՄՄ ձեռ. 731, ր. 250p-253p:

5 ընդանի:

6 ըմբէ:

7 Ծննդ. ԻԲ 13:

8 Բ օր. ԻԱ 3:

9 Ծնդ. ԻԸ 12:

10 Չիք ՆԲՇ:

11 Ծնդ. ԻԸ 15-20:

Դու քար քառանկիրն¹, զոր առեալ երանելոյն Դաւթայ եւ պարսաքարեաց զճակատն Գողիաթու²:

Զքեզ ձողաբարձեալ նախամարգարէին Մովսէսի ի բանակն իսրայէլեան ի բժշկութիւն յաւձիցն խածանողաց³,

Դու փառք փառաց Որդոյն Աստուծոյ

Դու Արարչին Աթոռ,

Դու Ստեղծաւորն Սեղան,

Դու Աստուծոյ զենարան,

Դու Քրիստոսի մահարան⁴,

Դու Յիսուսի պատժարան,

Դու պարծանք պարծանաց⁵ Հանուրց քրիստոնէից,

Դու զայիսոն նորոգ կառուցար՝ Հարեալ ընդ սիրտ ամենաչարին Բելիարայ,

Դու սուսեր անեղին՝ սրեալ յեսանաւ կենարարին մարմնով խոցեալ յաղիան պղծոյն Լաբանու⁶,

Դու սիւն լուսատեսիլ եւ աստուածընկալ,

Դու բերդ⁷ ամուր եւ աշտարակ Հզար յերեսաց թշնամոյն,

Դու տապանակ ապրեցուցիչ՝ յաւրինակ Նոյեան տապանին ի մրրկեալ ալեաց յաշխարհականս մեղաց ծովէ,

Դու փող կենագոչ⁸, զարթուցանաւ յաւիտենական կենաց,

Դու արձան ընտրական⁹ եւ խաչի նշան՝ աւծեալ արեամբն փրկչական,

Դու ձայն քաղցրանուագ Հրաւիրական եւ կոչնական,

Դու ազգումն խնդութեան, խրախուժեան եւ բերկրութեան,

Դու լուր բախճանական պատշաճական եւ պատեհական¹⁰,

Դու տաւիղ քնարական՝ Հնչողական եւ երգողական,

Դու տեսակ աստուածական՝ մաքրական եւ սրբական,

Դու երեւումն փրկչական, ամբական¹¹ եւ արդարական,

Դու յայտնիչ տէրունական քաղցրութեան եւ Համեղութեան,

Դու ցոյցք արքայական¹², Հրաշական եւ զարմանական,

Դու զոչումն ձայնական, սարսափական եւ պատկառական,

Դու թագ արքայական, փրկչական եւ արարչական,

Դու պսակ աստուածական յիսուսական եւ քրիստոսական,

Դու կառք տերունական, անեղական եւ թագաւորական,

1 քառանկիրն:

2 Ա Թազ. ԺԷ 49:

3 Ա Թազ. ԺԷ 49:

4 ՉիքՆԲՆ:

5 «Պարծանք սրբութեան Կաթողիկէ եկեղեցոյս են ամենայն գործք Քրիստոսի եւ առաւել պարծանք պարծանաց՝ Խաչն»: Կիրոյի Երուսաղեմացոյ Կոչումն ընծայութեան», Վիեննա, 1832, էջ 234:

6 Տէն եւ Նմն. Ծնդ. ԻԴ, ԻԵ, ԻԹ, ԼԱ, ԼԲ, ԽԶ:

7 Բերդ:

8 ՉիքՆԲՆ:

9 ընդրական (այսպէս եւ այլուր):

10 ՉիքՆԲՆ:

11 ՉիքՆԲՆ:

12 արքայական (այսպէս եւ այլուր):

Դու զարգ կայսերական, իշխանական եւ պետական,
 Դու պարզեւ անմահական, վերնական եւ բարձրական,
 Դու կեանք կենդանական, նորոգական եւ վայելչական,
 Դու առիթ փրկութեան՝ հոգեկան եւ մարմնական,
 Դու պատճառ ազատութեան՝ ներքնական եւ գերական,
 Դու միջնորդ հաշտութեան՝ հայրական եւ որդիական,
 Դու առողջութիւն ի հիւանդութեան, քաւութեան եւ ողորմութեան,
 Դու բժիշկ ցաւագնութեան, անգործութեան եւ գիւրութեան,
 Դու լուծումն տրտմութեան, տխրութեան եւ հեծութեան,
 Դու վէժ անվանական, անշարժական եւ անխախտական,
 Դու դուռն արեւելեան լուսական եւ արփիական,
 Դու արեւ արդարական, ճշմարտական եւ իրաւական,
 Դու բարբառ բառաւորական, պարզական եւ տարածական,
 Դու հանգիստ¹³ խոնարհական, հեղական եւ հանդարտական¹⁴,
 Դու լուծ հնազանդական, կամական եւ հաճոյական,
 Դու Բանին Հաւր բնակարան անգնական եւ անքնական,
 Դու կենաց հացին շտեմարան՝ անպատմական եւ անճառական,
 Դու արեանն աստուածական ընդունարան անթարգման,
 Դու ցաւդոյն արարչական ժողովարան անեզրական:
 Քանզի ի Քեզ հանգեալ¹⁵ Միածինն յամենայն ի գործս իւր:
 Քեւ խարթեալ տապալեցոյց զամուրս բռնակալին եւ ընդ ոտիւք տապաստ արկեալ ետ
 կոխան վիրաւորեցելոյն ի նմանէ,
 Քեւ ընկրկեալ ընկճեաց զաներեւոյթն Ամաղեկ եւ վանեաց ի սանդարամետս խորին
 խաւարին,
 Քեւ կարթեաց ի քիմս զվիշապն ահագին եւ հեղեալ որովայնիւ ընկեց ի յերկիր,
 Քեւ որսաց ի կորուստ զաւճն կամակոր եւ ջարդեաց զգլուխն չարագէժ,
 Քեւ էսպան զիշխանն մեղսասէր եւ զմահու գերեալսն յԱզամայ ի կեանս վերածեաց,
 Քեւ խայտառակեաց զնա ի մանկութեան իւրում, զոր պանծացեալ պարծիր իւրով
 ապստամբ զաւրութեամբն, եզից զզաւրութիւն իմ յամպս եւ եղեց նման բարձրելոյն, եւ
 հողոյ սահեցմամբ թաւալեցոյց¹⁶ ընդ գետնոյ,
 Քեւ յանդիմանեաց զթագաւորն անաւրէնութեան, որով զաւրացեալ տիրէր ի վերայ
 ամենայն հասակի,
 Քեւ կալեալ մահացոյց զարքայն մահաձին, որով ցանկայր որսալ ի կորուստ զբնութիւնս
 ամենայն եւ ետես զինքն կապեալ իւրովք զաւրականաւքն,
 Քեւ ըմբռնեաց ի շղթայս երկաթիս զփայլակն արագընթաց եւ արկ գնայ ի տարտարոսս
 դժոխոցն մինչեւ եկեսցէ Նայ, որ հատուցանաւ ի ըստ գործոց,
 Քեւ մանրեաց զարուսեակն անկեալ¹⁷ եւ ընդ աւղս¹⁸ ցնդեաց մթնացոյց զՆայ անհնարին
 կուրութեամբ,
 Քեւ զատապարտեաց ի մահ զանմարմինն փարաւոն, եւ ծովահեղձեաց զաւրս նորայ ի
 սանդարամետս ներքինս,

13 հանկիստ:

14 հանդարտական

15 հանկեալ:

16 թաւալելոյց:

17 անցեալ:

18 ալթս:

Քեւ ազատեաց զորդիսս Աղամայ ի ծառայութենէ բանսարկուին, զոր տոռամբ¹⁹ մեղաց կապեալ ունէր ընդ ուրում²⁰ իշխանութեան,

Քեւ ապրեցան ի հնութենէ մեղաց ծնունդք հնացելոյ մաւրն, քանզի նայ, որ բարձեալ ունէր զաշխարհս լրիւ իւրով, ի քեզ պնդեալ բեւեռեցաւ եւ կողահերձեալ ի վերայ քո մաքրեաց զտիեզերս յանիծիցն Աղամայ:

Ի Քեզ կատարեցաւ կանխասացութիւն մարգարէին Մովսէսի՝ տեսանել զկեանս կախեալ զփայտէ²¹:

Ի Քեզ ընկալաւ զանէծս նախածին մաւրն, եւ զնեաց զմեզ յանիծից աւրինացն:

Ի Քեզ ընկալաւ զփուշ նախաստեղծիցն ի գլուխ իւր որպէս զծաղիկ շուշանաց Հովտաց²², եւ ի բաց մերկացոյց զնոսս ի մահաբեր եւ ի սատակչական զգեստւոյն²³:

Ի Քեզ ծանուցաւ ի մէջ երկուց գազանաց, ըստ Ամբակումայ, եւ զաւճն խարզաղող բեւեռեաց ընդ խաչափայտիդ, մերկեաց յիշխանութեանց եւ ի պետութեանց յայտ²⁴ յանդիման խայտառակեաց:

Ի Քեզ հեղեղեցաւ գէտ յորդախաղաց եւ սրբեաց զթարախալից վերս համաշխարհաց:

Ի Քեզ բխեաց աղբեր եղեմական եւ զշարաւ մթերեալ խոցոյ բնութեանս կրկին մաքրագործեաց:

Ի Քեզ եւ ի կառս Իւր Հովին քաջ²⁵ հեծելութեամբն իւրով, եւ արար փրկութիւն եկանելն Իւրում:

Ի Քեզ կապեցաւ սամետաւք Արարիչն, ըստ ձայնին Յովբայ, եւ ի քիմս կարթեաց զվիրագն ահագին²⁶:

Ի Քեզ հնձանահարեալ կարմրացաւ պատմուճանաւ²⁷, ըստ Նոայեայ²⁸, եւ ճմլեցաւ ի քառաթեւիդ²⁹ ողկոյցն անմահութեան: Ըրագակիր աշտանակն Զաքարիա զքեզ տեսեալ պաշտառացեալ հաւթնաջահեան լուսով, այսինքն՝ հաւթնարփի շնորհաւք զարդարեալ: Քանզի զինչ իբրեւ զՔեզ գերագոյն եւ հրաշալի ոչ յականց շափիւղայից³⁰ եւ կամ յոսկոյ կեփացոյ, այլ յանփուտ փայտից ընդրեալ ի վաղնջուց որպէս զսուրբ կոյսն Մարիամ զաւրհնեալ Աստուածածինն զարմատն աւրհնութեան աբրահամեան տնկոյն յանարատ եւ յամենամաքուր արանց՝ սրբեալ եւ մաքրեալ յամենայն կրից յանցաւորաց: Ըստ նմին աւրինակի կրից յանցաւորաց: Ըստ նմին աւրինակի եւ զո՞ւ ամենաւրհնեալ փայտ սուրբ ընտրեցար³¹ ի մայրիցն Լիբանանու, եւ որպէս թագ արքայական եղար ի գլուխ Արարչին մինչեւ անաւթն ընտրութեան³², պետն զարմանաւոր, բացաւղն զրանն արքայութեան յափշտակալն յերրորդ ի յերկինս առաքեալն Պաւղոս, որպէս թէ Քեւ առաջնորդեալ եւ կամ ի թեւս Քո պատուաստեալ սլացաւ ի վեր, եւ, ունկնամուխ³³ եղեալ ի բերան Արարչին, լուաւ բանս անճառս, որ երբեմն գոյր գէն մահու եւ պատճառ կորստեան, որ եւ նախնոյն

19 փոռամբ:

20 թերեւս «խրում»-ի բարբառային ձեւն է:

21 Տե՛ս Բ օր. ԻԱ 3, ԻԸ 66:

22 Նմմով. Երգ Բ 1:

23 սգեսպոյն:

24 յայդ:

25 քաջ:

26 Տե՛ս Յովբ ԼԹ 10:

27 պապուճանաւ:

28 Տե՛ս Եսայի ԿԳ 2:

29 քառաթեւիպ:

30 շափիղայից:

31 ընտրեցար:

32 ընտրութեան:

33 ՉիթՆԻՆ:

Ստեփաննոսի սպանութեան եղեւ առիթ, այսաւր ի ձեռն առատաձիր պարգեւացն, զոր ի նմայ աղբիւրացաւ, այսաւր մեծաբարբառ ձայնատարած³⁴ Հնչմամբ պանծացեալ³⁵ պարծի ասելով. «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»³⁶:

Դու ամենաւերհնեալ փայտ սուրբ գաւազանաձեւ երեւմամբ ցուցար եզրպտական ազգին եւ զղիւթական յափշտակեցեր զգաւազան:

Դու նկարեցար զրոշմամբ ի վերայ սեմոց զրանցն Մովսէսեան ժողովոյն, որով ապրեցան յանդրանկածախն³⁷ սատակմանէ:

Աւրհնեալ ես Դու՝ Փայտ սուրբ, գաւազան ուղղութեան, գաւազան արքայութեան.

Զի՞նչ ասացից կամ յո՞յց բերից աւրինակ եւ կամ ու՞մ նմանեցուցից զԿենարարիդ բարձաւոր, քանզի զոր ցանկային վերնականացն պետութիւնքն ընդ աղաւտ տեսանել եւ սերովբեքն պարածածկեալ ի խոնարհ թագուցանէին զգէմս յաճէ փառաց Նորայ, այսաւր ի Քեզ ել ի բարձր գիտանոց՝ ոչ սոսկ Աստուած եւ ոչ մարդ մերկ, այլ անապական խառնութեամբ ի մերս միացեալ անորիշ բաժանմամբ եւ անշիթ միութեամբ, եւ է, եւ կայ, եւ ի Քեզ տեսանի Հանապազ ոչ աչաւք մարմնականաւք, այլ Հոգւոյ ակամբ եւ յստակ Հայեցուածովք, քանզի, ուր խաչն է, անդ է եւ խաչեալն, անդի է եւ խաչելութիւն, ապա կոյրք են ափշեալք յիմաստից, որք ոչ զարհուրին ի ձեռն Քուսմէ: Քանզի կոյր, զոր ոչ տեսանէ՝ զիա՞րդ պատմէ եւ կամ մեռեալ, որ պակասեալ է ի կենդանութենէ, զիա՞րդ կարէ գործել զերկիր: Սոյն աւրինակ անհաւատք եւ հայհոյիչք. եթէ՞ հրեայ իցէ եւ եթէ՞ հեթանոս եւ թէ՞ քրիստոնեայ իցէ թերահաւատ ի նոյն մնասցէ կուրացեալ: Իսկ մեք ազգս ուղղափառաց զայս առեալ մեզ ի պարծանս եւ յաղերսարկութիւն, թէ՞ Որ խաչեցար վասն արարածոց փրկութեան եւ մեզ ողորմեայ³⁸: Քանզի թագաւոր մինչ ոչ է պատրաստեալ ի պատերազմ՝ անյաղթ է թշնամի Նորայ, իսկ եթէ սուսերայպնդեալ³⁹ ճակատեսցէ ի մարտ պատերազմի՝ զիւրաւ յաղթէ թշնամոյն: Որպէս յայնժամ Արարիչն մինչ ոչ էր խաչեալ ոչ էր կործանեալ զԺոխքն, մինչ ոչ էր սպանեալ Կենարարն ոչ էր կենդանացեալ Ադամ, մինչ ոչ էր մեռեալ Աստուած ոչ էր նորոգեալ Եւայ, մինչ ոչ էր մահացեալն անմահն ոչ էր բացեալ զբախտն մարդկութեանս, մինչ ոչ էր գնեալ Կենդանին ոչ էր լուծեալ մահու իշխանութիւն:

Աստուած խաչեցաւ՝ մահ լուծաւ:

Աստուած խաչեցաւ՝ մահ կործանեցաւ:

Աստուած խաչեցաւ՝ սատանա կապեցաւ:

Աստուած խաչեցաւ՝ սատանա պարտեցաւ:

Աստուած խաչեցաւ՝ Ադամ ճոխացաւ:

Աստուած խաչեցաւ՝ Եւայ չքեղացաւ:

Աստուած խաչեցաւ՝ երկինք նոր եւ երկիր նոր պայծառացեալ զարդարեցան:

Քանզի աւրհնեալ է Փայտն, որով եղեւ արդարութիւն:

Քանզի «Փայտ կենաց է ամենեցուն, որ յուսան ի Նայ», ըստ Իմաստնոյն, եւ «որ յենուն ի Նայ իբրեւ ի Տէր Հաստատութեամբ»⁴⁰:

Գերագոյն եւ հրաշալի է Փայտիդ⁴¹ գաւրութիւն՝ ոչ ի քարանց եւ ոչ ի փայտից, այլ ի նոյն յինքն յԱստուծոյ, որ ի Քեզ է կառուցեալ, ի Քեզ տեսեալ Իմաստնոյն զԿենանքն եւ ուրախացեալ ասէր «Փայտ կենաց ամենեցուն»:

34 յանդրակածախն:

35 Գաղաթ. Զ 14:

36 ՉիքՆԲՆ:

37 պանծացեալ:

38 Նմմ. Ժամագիրք:

39 սուսերայպնդեալ ՉիքՆԲՆ:

40 Առակ. Գ 15:

41 փայտի:

Աւրհնեալ եւ Դու Փայտ սուրբ կեանսունակ եւ աստուածընկալ, յորում կենարարն ամենեցուն Աստուած ի Քեզ պատարագեցաւ, եւ արար խաղաղութիւն երկնաւորաց եւ երկրաւորաց:

Աւրհնեալ եւ Դու փայտ սուրբ անտանելի Բանին տեղի եւ զենարան, քանզի ի Քեզ զենաւ Գառն անարատ կուսական մարմնովն, եւ արար Հաշտութիւն ընդ Հաւր Իւրում եւ ընդ արարածս եւ զբանսարկուն կապեաց անխզելի կապանաւք:

Դու Փայտ սուրբ աւրհնեալ ընդ բնաւս, գաւազան առաջնորդական եւ ցուպ մխիթարութեան, քանզի Քեւ առաջնորդեալ ազգն եգիպտական ելին ի լեռն մխիթարութեան փարատեալք ի սգոյ տրտմութեանցն փարաւոնի:

Բարբերանեալ⁴² եւ ամենաւրհնեալ Փայտ կենաց, քանզի ստուգապէս մարգարէն Յսայեա ի Քեզ ասէր «Խրատ խաղաղութեան մերոյ ի նմայ, եւ Նորա վիրաւքն բժշկեցաք⁴³»: Եւ յիրաւի իսկ. քանզի ի վերայ Քո վիրավորեցաւ բարձաւղն վիրացն նախաստեղծիցն:

Դու գաւազան աջոյ ձեռնն կենաց ունաւղին, որով Հերքեալ Հալածեաց զգայլն ապականիչ յանապատն անմարդի, եւ զցրուեալսն ի Նմանէ ժողովեաց⁴⁴ ի գաւիթս Իւր սուրբ եւ ի տուն Տեառն Աստուծոյ մերոյ:

Այդ ցպով Հովուականաւ ժողովեցան ցրուեալքն ի բազում ամաց եւ կոչեցան ի մի Հաւաք եւ ի մի Հովիւ:

Այդ գաւազանաւ ել ի խնդիր Հովիւն քաջ մոլորեալ ոչխարին եւ ի վերայ ուսոյ բարձեալ դարձոյց ի Հայրենին իւր ժառանգութիւն⁴⁵:

Այդ⁴⁶ գաւազանաւ Հաւաքեցան Հերքեալքն ի վաղուց ժամանակաց, եւ ուրախացեալ բերկրեցան անանց բարութեամբն:

Այդ փայտիւ վայելչականաւ կենդանացան ի մեռելութենէ մեղաց ազգքն աղամածինք, եւ վերականգնեալ Հետեւեցան ընդ առաջ կենարարին:

Այդ Փայտիւ կեանսատուաւ նորոգապէս զարդարեցան Հնացեալքն մեղաւք եւ նորագգեստեալ⁴⁷ աւազանաւ շքեղացեալ ճոխանան յանմահականն վիճակ:

Այդ Փայտիւ կենարաշխաւ փառազարդեալ Հրաշանան յամեալքն զնդանաւ եւ պայծառափայլ պճնութեամբ թագաւորեն ի վերին Հարսնարանին:

Այդ Փայտիւ լուսակրաւ բարգաւաճեալ սքանչանան կապեալքն ի տոռունս մեղաց եւ թագազարդեալ ընդ Փեսային երկնաւորի մտանեն ի յառազաստն լուսոյ:

Այդ փայտիւ կեանսակրաւ խրախացեալ ցնձան ազատեալք ի տրտմութենէնէն ժառանգք⁴⁸ նախածին մաւրն եւ լուսանորոգ մաքրութեամբ ուրախանան ընդ Տեառն Աստուծոյ:

Այդ փայտիւ աւրհնեցելով վերաբերեալ կանգնեցան⁴⁹ կործանեալքն ի վիհս կորստեան եւ բերկրալից ուրախութեամբ պարառեալ պարեն ընդ վերին զուարթունս:

Դու պատճառ ազատութեան վերնոց եւ ներքնոց:

Դու առիթ փրկութեան Հրեշտակաց եւ մարդկան:

Դու տուաւ խաղաղութեան երկնաւորաց եւ երկրաւորաց:

Դու ի խաւարի լոյս ծագեցար:

42 բարեբանեալ:

43 Եսայի ԾԳ. 5:

44 ժովեաց:

45 ժառանկութիւն:

46 Այր (ախպէս եւ ալլուր):

47 ՉիքՆԲՆ:

48 ժառանկք:

49 կանկնեցան:

Դու կապելոցն ի դժոխս փրկութիւն աւետարանեցար:

Դու մեռելոցն կենդանութիւն քարոզեցար:

Դու մահացելոցն կեանք երեւեցար:

Դու, որք ի խաւարի եւ ի ստուերս մահու նստէին⁵⁰, արփնաւրէն ճառագայթիւք լոյս ծագեցար:

Դու գերագոյն քան գերկինս երկնից:

Դու բարձր քան գկամար վերինն երկնի:

Դու ընդարձակագոյն քան զՀաստակառոյց գետնոյս լայնութիւն:

Դու երկայնագոյն, քան զթանճրամած Հողոյս տարածումն, քանզի Նա, որ ի Քէն կախեցաւ, զամենայն ընդ բռամբ ունի, եւ ոչ ինչ է ի Նմանէ թագուն:

Իսկ ի քեզ Աստուածն անպարագիր եւ ամենունակ սեւեռեալ բեւեռաւք Հանդերձ մերոյին բնութեամբ:

Դու գրայտին բացաւդ եւ ի ներս մութանաւդ Հեռացելոյն ի նմանէ, զոր սերովբէն պահէր Հրեղէն սրովն զճանապարհ կենաց մտին, այսաւր Քեւ խորդեալ բացաւ, գող ոչ գոյ, զի գողասցի եւ սպանցէ, քանզի ըմբռնեալ կապեցաւ գողն եւ յաւարի առաւ մթերք գողութեան Նորայ: Քանզի ով որ յերկրածնացս ճառել կարէ գորպիսութիւն ձեւոյ Քո, քան զինչ տեսանի ի Քեզ, եթէ ոչ Աստուած մահացեալ, եւ ի նոյն Ինքն անմահ մնա Հանդերձ առեցելովն: Եւ ո՞վ որ ի ստեղծականացս բաւականացի բան գովութեան ընծայել⁵¹ Քեզ, քանզի մարութեան եւ առաքինիքն աւրհնեալքն յամենաւրհնեալ բերանոյն Աստուծոյ ափ ի բերան եղեալ լռեցին, իսկ ես՝ զազրացեալս մեղաւք ի քառից գիմաց իբր կարացից շարժել ի բանս գովեստից զչար սրեալ լեզուս ընդդէմ լուսակիր Խաչիդ, ապա զոր աւրինակ ապականեալքն մեղաւք, ի կանանց ասեմ եւ յարանց, որք անպատկառ մերձենային ի յոտսն Յիսուսի, նոյլին վիրաւք եւ ես վիրաւորեալ բերապատիկ առաւելութեամբ Հայցեմ բազում պաղատանաւք ներել յանցաւորիս եւ անսալ անաւրինիս:

Դու արձան ընտրական⁵² տէրութեամբ աւծեցար եւ պարիսպ Հաստատուն Քրիստոսիւ ամրացար:

Դու պատուար վայելուչ Յիսուսիւ Հաստատեցար, եւ դուռն արեւելեան Աստուծով կանգնեցար⁵³:

Դու կառք քառակերպեան Հաստէին կազմեցար, եւ կեանք մարդկան յայտնի երեւեցար:

Դու Աթոռ չորեքկուսի լուսոյն անեղի նորոգ կառուցար, եւ յոյս ապաստանի Համայնիցս քարոզեցար:

Դու ծառ կենաց յաւէտ ծաղկեցար, եւ պտուղ անմահութեան մարդկան պարգեւեցար:

Դու շտեմարան անկողողպտելի մանանայիւ լցար, եւ ի կերակուր սովեալ բնութեանս պարգեւեցար:

Դու վէմ անվանելի յարփոյն աւծեցար եւ զէն անթելի ի լուսոյն իւղեցար, եւ վահան ամրութեան ի Հոգւոյն մաքրեցար:

Աւրհնեալ ես դու փայտ սուրբ էիցս ունողին, բնակարան անտանելի Բանին բարձաւդ եւ կենաց ձայնին կարապետ, նշան ամենայաղթ եւ պարիսպ ամուր ընդդէմ չարին մարտութեան, որով աւծեալն Աստուած անծախսապէս ի Քեզ միշտ պատարագի՝ անթերի մարդկութեամբ եւ անպակաս Աստուածութեամբ:

Դու ընդ Տեառն փայլես ընդ ամպս երկնից, ընդ արեւելս կամք Հաւր եւ Հաճութիւն Հոգւոյն Սրբոյ:

50 Եսայի ԽԲ 7:

51 ընծայել:

52 ընդրական:

53 կանկնեցար:

Դու քան զամենայն փառս գերագոյն երեւեցար, որ եւ պսակ արքայական կապեցար ի գագաթն անեղին:

Մինչեւ Աստուածածին կոյսն կամաւորութեամբ Քեզ երկիր պագանէր, պաշտէր, համբուրէր, ծնրագրէր⁵⁴ որպէս սպանեալ Որդոյ նշան զՔեզ վերածայնէր, եւ դարձեալ զանձն մխիթարէր, ի Քեզ տեսանէր զանդրանիկն իւր պնդեալ բեւեռաւ, որպէս թէ խաւսակից գոլով միմեանց՝ Աստուածութեամբն ի մարմնի միացեալ, զոր առ յանարատ Կուսէն ոչ պակաս կամ առաւել քան զՔեզ, այլ մի եւ նոյն Աստուծոյ կրաւդ: Եւ թէպէտ մարմնացաւ յանապական Մաւրէն, սակայն ոչ հեռացեալ տեսանի ի նմանէ: Վասն զի զՆա պատրաստեաց տաճար Իւրում Աստուածութեան եւ ընդ նմայ է շնորհաւք եւ զաւրութեամբ: Իսկ եթէ ի Քեզ խաչեցաւ եւ նոյն անբաժանելի է ի Քէն, եւ ի Քեզ տեսանեմք զՆայ էութեամբ եւ Աստուածութեամբ, եւ ընդ Հաւր Իւրում եւ Հոգւոյն սրբոյ աւրհնի եւ երկրպագի յամենայն ստեղծականացս գոյից, զոր եւ եւս խոստովանիմ Աստուած բարերար եւ Տէր բոլորեցունց:

Ո՛վ Փայտ սուրբ, աստուածունակ եւ աստուածաբարձ:

Ո՛վ Փայտ սուրբ, աստուածընկալ եւ կենսապարգեւ:

Ո՛վ Փայտ սուրբ, լուսակիր եւ արփիաւոր:

Ո՛վ Փայտ սուրբ, կեանսունակ եւ կենաքարոզ⁵⁵

Ո՛վ Փայտ սուրբ, կեանսակիր եւ կենաբաշխ:

Ո՛վ Փայտ սուրբ, խորհրդաւոր եւ աստուածային:

Ո՛վ Փայտ սուրբ, փրկչատեսակ⁵⁶ եւ աստուածանիստ:

Ահա Փայտ սուրբ հրաշագեղ ծաղկեալ անթառամելի, վայելուչ եւ քաղցրահամ պտուղ:

Ահա տունիկ տնեչալի եւ բարեպտուղ, անուշահոտ եւ համեղայնաշակ:

Ահա ծառ գեղեցկազարդ եւ աստուածատուր, որով կենաց պտուղն պարգեւեցաւ:

Ահա Սեղան եւ Հաց նուիրանաց, զոր իջեալ յերկնից վասն կենաց աշխարհի:

Ահա Աթոռ քառակուսի եւ զանազան լուսափայլ մարգարտաց ընդելուզեալ:

Ահա աշտանակ լուսակիր եւ արփիաւոր, յորում եղաւ ճրագն լուսատու տանն Յակովբայ:

Ահա սիւն հրեղէն եւ պայծառափայլ, որով խարսխեալ հաստատեցաւ անուամբ Աստուծոյ յերկրէ ի յերկինս:

Ահա սանդուխտ երկնաման կանգնեալ, էջ հրեշտակաց ի յերկիր եւ ելք մարգան ի յերկինս, վասն զի հաւասարեաց զմարգիթի երկնայնոցն եւ զմիջնորմն ցանկոյն քակեաց եւ արար խաղաղութիւն արեամբ Խաչին ընդ ամենայն երկիր:

Ահա կատարեցաւ յառաջասացութիւն մարգարէին Մովսէսի, որով կախեցաւ կեանքն ճշմարիտ զՓայտէ եւ զմեռեալ բնութիւնս, որ յԱզամայ, կենդանացոյց:

Ահա ստուգապէս յանկ ելեալ աւարտեցաւ Հոգեւրդութիւն մարգարէիցն, քանզի ողորմեցաւ Տէր Սիոնի եւ դարձոյց զգերութիւն Յակովբայ:

Ահա բարձաւ անէձքն նախնոյն Ազամայ, զոր ընկալաւ ի բերանոյ Արարչէն վասն դառնութեան վաղուեանն զրախտին:

Ահա մեծապէս սպանծացեալ պարծի եկեղեցիք հեթանոսաց հանդերձ աստուածատուր զաւակաւք, եւ խրախացեալք երկրի ասելով. Ձմեռն էանց այգիք մեր ծաղկեցան եւ հոտ անուշութեան սփռեալ տարածեցաւ ընդ ամենայն երկիր, եւ չիք ոք որ մեղադիր լինիցի ընտրելոյս Աստուծոյ, եւ կամ «ո՞վ մեկնեացէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի», քանզի հանապազ առ մեզ է եւ ընդ մեզ եղիցի յաւիտեան: Քանզի ի տեսանագրելն զմեզ նշանաւ Խաչին առ մեզ խոնարհի սիրով, իսկ ապա հեռանա անհաշտելի անպատշաճ գործոց մերոց յաւուրս

54 ծնորադրեր:

55 ՉիքՆԲՆ:

56 ՉիքՆԲՆ:

վերջին ժամանակին, զոր եւ ես՝ մահու մատնեցեալս առնս անաւրէն ի յարանց գնդից, տնակիցս սատանայի եւ արբանեակ նորին զգէմս չարագոյնս ի յերկիր եղեալ պաղատիմ աղիողորմն կողկողանաւ թերեւս առ իս դարձցիս մխիթարել զվշտագնեալս յառատաձիր պարգեւաց Քոյ, զի եւ ես գտայց մասն բարի ընդ երջանկացեալսն Քոյին շնորհիւդ, զի եւ առ իս ծագեսցես զնշոյլ արգարութեան արեգականդ ճառագայթից՝ լուսաւորել զմառախուղ մթութեան դառն գիշերոյն մանաւանդ, զի փրծեալ ապրեցայց յայնի սոսկալի եւ տիեզերահրաւէր⁵⁷ դատաստանացն եւ ապրեալ ազատեցայց ի գառնութիւն եւ ի զագրատեսակ յորդանցն անվախճանից Հանդերձ ամենայն ուղղադաւան պաշտաւնէիւք քրիստոսականաւք, որք սպասեալ մնան Հրամանաց երանականաց Աստուածութեանդ Քո: Եւ որք աշխարհայոյսք են եւ երկրակալք Հայրապետք քահանայական դասիւք եւ թագաւորք սրբամաքուրք իշխանական զաւրաւք պահել զնոսայ անսայթաք յամենայն իրաց Հարաց ի ծոց եկեղեցւոյ սրբոյ աստուածայնոյ ի փառս եւ ի գովեստ Աստուածութեան Քո, մանաւանդ եւս առաւել զտարածամ ճնջեցեալսն մեր, որք յուսով ակնկալութեամբ Հրաժարեալք յաշխարհէ Քեւ առաջնորդեալ առ Արարիչդ փոխեցան, որով արժանաւորս զնոսայ արասցես լուսոյ երեւման արփրապալլ եւ լուսապայծառ ծագման Քո մասնաւորիլ պսակացն դասուց երանականացն մարգարէիցն խմբից եւ առաքելականացն գնդից եւ ամենայն Համագումար պսակաւորացն բարեխաւսութեամբ սուրբ եւ փառաւորեալ Մարգ լուսոյ սուրբ Աստուածածնիդ եւ ամենայն սրբոց Քոյ, ընդ որում Քեզ եւ Հաւր Քո եւ Հոգւոյդ Սրբոյ վայել է փառք եւ երկրպագութիւն այժմ եւ միշտ:

ԹՈՂԱՆՆԻՍԻ ԱՇԽԱՐՀԻ ԻՐԻՑՈՅ ԱՍԱՅԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ]⁵⁸

Հայրն երկնաւոր եւ անսկիզբն առաքեաց զՄիածինն Իւր, որ եկն եւ էառ մարմին յամենամաքուր յարգանդէ յաստուածաբնակ խորանէ: Իսկ նայ ի կամս առաքչին իւրոյ մարգասիրեալ, յանձն իւր աւարտեալ զպարտիսս յանցանաց նախահաւրն եւ փոխանակ, զի անկարող գոլով մարդոյն լինել Աստուած, Նայ կարողաբար եւ ճշմարտապէս եղեւ Մարգ Եւ զի ոչ գոյր պատճառ ազատութեան մարդոյն, բայց միայն զմահ մարգացելուն Աստուծոյ ինքնին բոլորից Տէրն ստուգապէս եւ իրաւաբար մեռաւ եւ զմեռեալն կենդանացոյց ի կեանս նորս եւ անմահականս:

Ապայ զայնպիսոյ զանճառ Հաւր Որդոյ զտաճար եւ զմարմնարան որպիսի՞ լեզ[ու]աւ կարասցուք ի գովութիւն ածել բաւականապէս, եւ կամ որպիսի՞ խաւսիւք զփոխարէնս երախտեաց Նորա Հատուցանել, եւ կամ զիա՞րդ բաւականացի միտք ի խորս խորին ծննդեանն Նորայ մտանել, եւ կամ զիա՞րդ կարասցուք Հասու լինել անճառ բարձրութեան սորայ, եւ կամ իբր կարասցուք զբազմարժանին երանութեան, ըստ արժանւոյն գովել, Նայ զի եւ ոչ Հրեշտակք եւ ոչ Հրեշտակապետք կարեն զամենեւեան⁵⁹ Մայրն ընդ գրով երանութեան մուծանել, վասն զի անճառ է Ծնեալն եւ անպատու մ'Յնաւղն. թէպէտ որ յերկրէ է, սակայն երկնային է, եւ զի թէպէտ եղական է, ապա անեղ է, եւ թէպէտ մարդ է, սակայն Աստուած է՝ անճառ մարգեղութեամբ, եւ թէպէտ խոնարհագոյն է, սակայն բարձրագոյն է: Եւ ո՞վ է Հասու Նորայ. եւ թէպէտ տղա գոլով ի Կուսէ, սակայն

57 ՉիքՆԱՅ:

58 Աղբյուր ՄՄ. ձեռ. 731, ր. 253բ-270բ:

59 ՉիքՆԱՅ:

յաւիտենական է, եւ թէպէտ մանկացեալ է, սակայն հինաւորաց է⁶⁰ եւ թէպէտ կաթն ջամբէ, սակայն բոլորիցս դարմանիչ է, եւ թէպէտ ի խանձարրապատ, ապայ արարածոց խնամիչ է, եւ թէպէտ ստընդիայ է, սակայն բազումս կերակրէ: Եւ թէպէտ նշանակեցաւ ի Բեզգեհէմ Հրէաստանի, սակայն անուր է, եւ զի թէպէտ ծանուցաւ, սակայն անծանաթ է, եւ թէպէտ յայտնեցաւ Մարիամաւ, սակայն առ Հաւր է եւ ընդ Հաւր է եւ ի Հաւրէ ոչ մեկուսացաւ Հանգերձ առեցելովն: Եւ թէպէտ մարդացեալ երեւեցաւ, սակայն ո՞՞ ծանիցէ զՆա, ըստ մարգարէին⁶¹: Ապայ զինչ, բայց եթէ ափ ի բերան լինել եւ լուրն է իրաւացի: Բայց կամ եղեւ եւ ինձ՝ ամենաչար գծնէիս գովել, ըստ իմում կարի, զամենագովելին եւ զամենաւրհնեալն զՄայրն իմոյ կենարարին: Եւ զի թէպէտ կոյր եմ տեսանելեաւք, սակայն Նա լոյս է համապայծառ: Եւ թէպէտ խաւար եմ մեղաւք, սակայն Նայ լուծիչ է խաւարի: Եւ զի թէպէտ եւս մոայլ եմ աղջամղջին, սակայն նա սպառիչ է նորայ. ոչ կարէ յաղթել փոքր խաւար լոսոյն անճառի, եւ ոչ կարէ ստուերացուցանել զլոյս արեգական խաւար գիշերոյ, զի որ գնա ընդ մեղաց գիշեր՝ գայթակղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմայ, այսինքն՝ կատարեալ Հաւատոյ ճշմարտութիւն, ըստ Հրամանի մերոյ Լուսաւորչին, որ ասէ, թէ՝ «Ճշմարտութիւն Հաւատոյ լոյս է աչաց»⁶², ապա ես՝ խաւարեալս Հոգով Հաւատամ ի լոյսն, զի առաջնորդեսցէ ինձ եւ Հանցէ զիս յանգիտութենէ գնացից, եւ տացէ ինձ բան ի բանալ բերանոյ իմոյ, եւ ձեզ տացէ ու[ն]կն առ ի լսել եւ աւրհնել զաւրհնեալն ընդ բնաւս զԱստուածածինն Մարիամ գերկնից զարդն, գովեալն ներբողիւ, գովասանական երգով ի գլուխ գովեալ վեհիցն մաքրեցելոցն, վերնականացն փառազարդիցն, եւ յերկրականացս սրբազանից գեղապանձ եւ բանապաճոյճ վայելչական երգով, կոյս Տիրածին, Աստուածամայր սրբուհի, երիտանձնութեան⁶³ անձախելի շտեմարան, զոր եկնաբայլ զուարթունն աւետարանեալ ձայնէր գեկաւորութիւն Սուրբ Հոգւոյն, եւ զբարձրեալն Հաւր զհովանաւոր զաւրութիւն եւ զձնիցելոյն ի քէն զանճառ Հաւր Որդոյն զանպատումն մարդեղութիւն, որով յայտնի ցուցար տաղաւար Երրորդութեան՝ Հաւրն բնակարան, Որդոյն մարմ[ն]արան եւ Հոգոյն Սրբոյ աւթարան:

Մայր անարատ վերին Արքային:

Տաճար սրբութեան երկնից բարձաւղին:

Խորան լուսաճեմ բնաւից Արարչին:

Տաղաւար գերարփի էիցս Ստեղծաւղին:

Տեղի Հանգստեան բոլորից գոյացուցչին:

Աթոռ արփիաւոր անեղ Միածնին:

Տուն լայնածաւալ երկնից յաւրինոցին:

Բնակութիւն ընդարձակ Արքաթագաւորին⁶⁴:

Կամաց Հաճութիւն պաշտեցեալ Բանին:

Մայր կաթնամատոյց Հաւր ծոցածին Բանին:

Վասն զի ի քէն մարմնացաւ Աստուածն յաւիտենից:

Իսկ մարմնացաւ, որպէս կամեցաւ,

Իսկ մարդացաւ, որպէս գթացաւ,

Իսկ յայտնեցաւ որպէս քաղցրացաւ,

Իսկ ծանուցաւ որպէս Հաճեցաւ,

Իսկ Համբաւեցաւ որպէս զԱրարիչ,

Իսկ խոստովանեալ որպէս զԱստուած,

60 Տէն Դան. Է 9, 13, 22:

61 Նմմր. Յովբ. ԻԳ 3:

62 Տէն «Գրիգորի Լուսաւորչի Յաճախապարտմ ճառք», Էջմիածին, 1894, էջ 22 ր. 1:

63 Չիք ՆԲՇ:

64 Չիք ՆԲՇ:

իսկ հաւատացաւ որպէս ստեղծաւղ,
 իսկ հաւատարմացաւ ընդ բնաւս,
 իսկ դաւանեցաւ ընդ հանուրս,
 իսկ բարձրացաւ որպէս բարերար,
 իսկ աւրհնաբանեցաւ ի գոյիցս,
 իսկ փառաւորեցաւ յաւիտեանս:

Զի սայ է, վասն որոյ մարգարէն ասէր. «Ահա կոյս յղացի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն Նորա Էմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած»⁶⁵:

Ծնաւ լոյսն ամլածին զլոյսն անեղական,
 ծնաւ ջահն վառեալ ի հայրառաք⁶⁶ լուսոյն
 զլոյսն արփիական,
 ծնաւ վառեալ մորենին զեռանդն աստուածային,
 ծնաւ ամպն⁶⁷ սպիտակերանգ⁶⁸ զցաւդն հայրածին
 ծնաւ ծովն բազմաշնդ⁶⁹ զորթն հայրատունի,

ծնաւ բարունակն աւրհնութեան զողկոյզն քաղցրաճաշակ, յորմէ զմայլեալ արբեցան ազգ քրիստոնէից,

ծնաւ երկիրն բարի եւ պարարտ զհացն երկնային, յորմէ իջեալ յազնցոյց զժողովուրդս, որ յաւիտեան չիք նուազութիւն:

Եւ ո՞վ արդեաւք ծնաւ Աստուած. կոյս ոմն Մարիամ անուն ամուլ ծնաւդաց զաւակ, յորմէ Լուսաւորութիւն⁷⁰ անուանի: Սա ստուգապէս Մայր անսկզբնական⁷¹ Բանին Հաւր, զոր ծնաւ անսկիզբն Հայր անսկզբնական ծննդեամբ յառաջ քան զյաւիտեանս⁷²: Սա ամէնասուրբ Կոյսս զուգահաւասար գտաւ երկնաւոր Հաւրն, վասն զի, զոր Նայն ծնաւ եւ սա յորովայնի տարաւ, քանզի ի Հաւրէ ծնաւ անեղ էութեամբ եւ ի Մաւրէ ծնաւ անհայր Աստուած ճշմարիտ եւ Մարդ կատարեալ, եւ նոյն ինքն անեղ ընդ Հաւր հանդերձ առեցելովն:

Դու ամենասուրբ Կոյս, ստուգապէս Մայր Աստուծոյ Բանին,
 Դու աւրհնեալ Տիրամայր ճշմարիտ ծնաւդ Որդոյն Աստուծոյ,
 Դու երանեալ Տիրուհի՝ իրաւապէս բնակարան անմահին Աստուծոյ,
 Դու անսկզբնական Բանին Հաւր մարմնարան՝ անճառական եւ անպատմական,
 Դու ծագմանն անեղական ընդունարան անքննական,
 Դու հրոյն արփիական խառնարան անկիզական,
 Դու բոցոյն արարչական շտեմարան⁷³ անթարգման,
 Դու արփոյն անստուերական աւթարան անեղական,
 Դու ցաւոյն աստուածական կրաւղ անհաս եւ անգննական,

Դու առաւաւտ խաղաղութեան ծագաւղ լուսոյն անճառական, քանզի ո՞վ ոք ի ստեղծականացս բաւականացի բանաստեղծական գովեստիւ բան գովութեան ընծայել⁷⁴ երկրպագեալ Մաւրդ: Քանզի աննման ես եւ ծնունդ քո հրաշալի: Ապայ եթէ ոք վստահացի՝ քեւ կարողացի՝ պաշտեցեալ ծնաւղիւտ, ապայ ես՝ անարգս ի կարգս

65 ամբն (այսպէս եւ այլոյ):

66 ՉիքՆԲՆ:

67 Նմմր. Եսայի ԺԹ 1:

68 սպիտակերանկ:

69 ՉիքՆԲՆ:

70 «Մարիամ» անվան միջնադարում լայնորեն կենցաղավարող սրուգարանություն է:

71 անսկզբնական (այսպէս եւ այլոյ):

72 գալիլեանս (այսպէս եւ այլոյ):

73 ըշփիմարան:

74 ընծայել:

բանականաց հե անպիտանս զամենայն ազգաց, խաւարաւ ծածկեալս մռայլս աղջամղջին, անբժշկելի ցաւաւք ցաւագնեալս, անկազդութիւնի խորտակեալս, անողջանալի⁷⁵ մահացեալս, անկանգնելի կործանեալս: Զիա՞րդ համարձակիմ զչար սրեալ լեզուս յաւրհանալդ Բան մխել եւ կամ չարատես աչաւք յանհաս բարձրութիւն մեծիդ⁷⁶ ակն արկել, եւ կամ չարայուշ մտաւք զխորս խորոց ահաւորիդ ծանուցանել, գուցէ կուրացեալ ի վայր կործանեցայց եւ եղեց ծաղր նշաւակի որդոյն անաւրէնութեան: Բայց գու ամենաւրհնեալ Աստուածածին ձեռնարկեալ տկարիս եւ աւժանդակ լիւր մահացելոյս, զի քեւ ազատեցայց ի բազմակսկիծ⁷⁷ հարուածոց, եւ կարողացեալ քօին աւգնականութեամբդ երգեցից քեզ աւրհանութիւն ըստ իմում կարի:

Դու ամենարհնեալ Աստուածածին Մարիամ, քաղաք կենդանի եւ գուռն երկնային,

Դու երանեալ Տիրուհի, աւրհնեալ յազգս ազանց եւ ի լեզուս ազգաց, ցաւղալից ամալ եւ պարարտացուցիչ բանական երկրի, աւրհնեալդ ընդ բնաւս Մայր կենարարին, տաճար լուսակիր եւ արփիաւոր, յորմէ լուսաւորեցան խաւարաւ ծածկեալքն ի բազում ամաց,

Դու ամենագով եւ բարեբանեալ Աստուածածին Մայր, խորան աստուածունակ, քանզի ազգ, որ ի խաւարի եւ ի ստուերս մահու նստէին, այսաւր քեւ ամբարձեալ երկնայնոցն հաղորդեցան,

Դու ամեներջանիկ սրբուհի Մայր Էին Աստուծոյ,

Դու իսկապէս լուսոյն անաղարտ վառարան,

Դու անստուեր լուսոյն ջահ բազմափայլ,

Դու արփիաւոր լուսոյն դամբար մշտավառ,

Դու հայրաւաք⁷⁸ լուսոյն ճրագ անշիջանելի,

Դու մարգարէիցն քարոզ,

Դու առաքելոցն պարծանք,

Դու հրեշտակացն փառք,

Դու սերովբէիցն⁷⁹ պսակ,

Դու քէրովբէիցն զարդ,

Դու քրիստոնէիցն հաւատ,

Դու ճգնաւորաց ցնծութիւն,

Դու կրաւնաւորաց ուրախութիւն,

Դու կործանեալ մարդոյն վերստին կանգնիչ⁸⁰,

Դու տրտմեալ մաւրն միւսանգամ ի կեանս վերածիչ, քանզի չիք քեզ նման ի բոլոր եղեալքս:

Դու միայն երանեցար ի բոլոր ազանց⁸¹, վասն զի զԱստուած ծնար, զանդրանիկն արարածոց⁸², զերկնաւոր Հաւր Որդին, զՆայ, որ ի Հաւրէ ծնաւ եւ ի Հաւրէ ոչ բաժանեցաւ՝ զանժամանակն, զաներբն, զանսկիզբն, զանհասն, զյաւիտենականն, զմշտնջենաւորն, զանուրն, որ ոչ տեղեալ փակի եւ ոչ վայրիւ պարունակի եւ ոչ սահմանաւ բաւանդակի:

Դու երկնաւոր Հաւրն գտար հաւասար, վասն զի միոյ Որդոյ կոչեցայք ծնաւդ՝ անժամանակ ի Հաւրէ եւ անժամանակ ի Մաւրէ, եւ դարձեալ ժամանակաւ ի Մաւրէ եւ նոյն անժամանակ ընդ Հաւր հանդերձ առեցելովն:

75 անողջանի:

76 մեծիւր:

77 ՉիքՆԲՆ:

78 ՉիքՆԲՆ:

79 սերովբիցն:

80 կանկնիչ:

81 Նմմր. Ղուկ. Ա 45:

82 Կողոս. Ա 15:

Ո՛վ որովայն երկրպագեալ Մաւրդ, քանզի Նա, որ երկինք աթոռ են եւ երկիրս պատուանդան⁸³ ոտից⁸⁴, ի Քեզ տաղաւարեալ Հանգչի⁸⁵:

Ո՛վ որովայն պաշտեցեալ Մաւրդ⁸⁶, քանզի զՆա, զոր երկինք ոչ կարէին տանել, դու տարար լիապէս եւ ոչ նեղեցար:

Ո՛վ որովայն խոստովանեալ Տիրուհոյդ⁸⁷, որ զանտեսն Հրեղինաց եւ Հոգեղինաց ի քեզ կրեցեր եւ ոչ նուագեցար:

Ո՛վ որովայն Աստուածածին Մաւրդ, որ զվէմն անշարժել ի քեզ ծրարեցեր, եւ ոչ պարպատեցար,

Ո՛վ՛ կուսական արգանդ եւ աստուածունակ,

Ո՛վ՛ կուսական արգանդ լուսակիր եւ արփիաշէն,

Ո՛վ՛ կուսական արգանդ աստուածընկալ եւ աստուածաբարձ,

Ո՛վ՛ կուսական արգանդ տաճար անեղաշէն անեղ Միածնիդ,

Ո՛վ՛ կուսական արգանդ⁸⁸, խորան փրկչանորդ⁸⁹ Փրկչիդ⁹⁰ աշխարհի,

Ո՛վ՛ կուսական արգանդ տաղաւար արփիական երկնից Արքային,

Ո՛վ՛ կուսական արգանդ, տուն տիրաշէն⁹¹ Տեսն տիեզերաց:

Զի՞նչ ասացից եւ կամ զի՞նչ խաւսեցայց եւ կամ ու՞մ նմանեցուցից զԱստուծոյ ծնաւդդ. Հիանամ, սարսափիմ, սասանիմ, սոսկամ, երկնչիմ, դողամ, պատկառիմ. գուցէ ոչ կարացից ըստ պատշաճ պիտոյիցն խաւսել վասն Աստուածամաւրն: Արգանդ որովայնի սորայ բերանոյ Հաւրն Հաղորդեցաւ, ընդարձակութիւն որովայնի սորայ ծոցոյ Հաւրն Հաւասարեաց, աննմանդ ի յեղականքս, Աստուածածին Մարիամ, անհամեմատդ ի սուրբս:

Դու պարծանք պարծանաց Հանուրց տիեզերաց,

Դու ընդ Երրորդութեան փառաւորիս,

Դու ընդ Երրորդութեան երկրպագիս,

Դու ընդ Երրորդութեան պատուեալ մեծարիս,,

Դու ի գիրկս Երրորդութեան բազմեալ Հանգչիս,

Դու Աջովն Հայրական գգվիս,

Դու բերանովն Քրիստոսի աւրհնիս,

Դու շրթամբք Հոգւոյն Աստուծոյ գովիս,

Դու ծառ կենաց պտղոյն երկնայնոյ,

Դու աղբեր անմահական ջրոյն կենդանոյ,

Դու այգի վայելուչ Տեսն խաղողոյ,

Դու պարտեզ ամրափակեալ ծաղկին ծիրայնոյ,

Դու սափոր ոսկեղէն մանանային իջելոյ,

Դու ամպ ցաւդալից գարնանային անձրեւոյ,

Դու շտեմարան անկողոպտելի Հացին տիրայնոյ,

Դու Հնձան բազմազեղուն գինոյն կոխելոյ,

Դու գրախտ աստուածական ցանկեալ ի յարփոյ,

Դու Մայր կաթնամատոյց Հաւր ծոցածինն Որդոյ,

83 պանդուխտան:

84 Սղմ. ՂԸ 5, ՃԲ 19, Գործք Է: 49:

85 հանկջի:

86 մարտ (սյուսկեա եւ սյուր):

87 Տիրուհոյ:

88 արգանդ:

89 ՉիքՆԲՆ:

90 Փրկչի:

91 ՉիքՆԲՆ:

Դու ծնար զՏէրն բոլորից,
 Դու բարձեր բազկաւք զբարձաւդն երկնից,
 Դու բաժակ դուգնաքեայ եւ Համատարած ծովուն եղեր ընդունարան,
 Դու աղջիկ տալիթայ Հնգէտասանամայ, եւ անտանելոյն եղեր բնակարան,
 Դու եւ ով ոք քան զքեզ բարձր եւ խոնարհ բարձ, որ բարձրեալ Որդոյն եղեր բարձաւդ
 եւ խոնարհ որ ի բարձունս վերացար, զքեզ եւ ոչ հրեշտակք կարեն պատմել զքէն, վասն զի
 անճառ է եւ ընդ քննութեամբ ոչ անկանի, նա քննէ զորպիսութիւն ծննդեան իւրոյ, որ եւ
 զՀայրական գիտէ զծնունդ: Անճառ ծնաւդ անպատումն Որդոյդ, անքննին Մայր անզննին
 Բանիդ:

Դու ցնծութեան ցոյցք,
 Դու ուրախութեան պատճառ⁹²,
 Դու բերկրութեան բերումն,
 Դու խնդրութեան առիթ,
 Դու ճանապարհ յուսոյ,
 Դու առաջնորդ կենաց,
 Դու շաւեղ կենդանութեան,
 Դու դուռն բարութեան,
 Դու ելք ողորմութեան,
 Դու առաւաւտ խաղաղութեան, որով ծագեցաւ լոյսն եւ փարատեցաւ խաւարն
 մթացուցիչ:

Քեւ յայտնեցաւ խորհուրդն, որ ծածկեալն էր յաւիտեանց եւ յազգաց,
 Քեւ Երրորդութիւն սուրբ Հաւատարմացաւ,
 Քեւ աստուածապաշտութիւն տարածեցաւ,
 Քեւ Հաւատ ուղղափառացս Հաստատեցաւ,
 Ամենայն ինչ, որ մեր է, քեւ յարգարեցաւ,
 Քեւ պայծառացան եկեղեցիք Հայաստանեաց,
 Քեւ ծաղկեցան աթոռք Հայրապետութեան մերոյ,
 Քեւ նորոգեցան վայելչապէս գաւազան վարդապետութեան մերոյ,
 Քեւ շքեղացեալ զարդարեցան դասապետութիւնք քահանայութեան մերոյ:
 Եթէ՛ երկնայինք եւ եթէ՛ երկրայինք եւ ամենայն, որ ինչ ընդ բնաւս, քեւ պարսպեալ
 ամրանան Հաստատութիւն տարրական աւդոց,
 Քեւ պնդեալ անվնաս ամրափակին լուսատուք, եւ լուսատեսք նոցին քեւ զտեալ
 վայելչացան:

Գնացք լուսատուացն քեւ անխարդախ ուղեւորին:

Յնդմունք աստեղացն առանց երկուանալոյ քեւ ի տեղիս իւրեանց ժողովին:

Աւդք խստացուցիչք քեւ Հանդարտանան:

Դառնութիւնք եղեմնական. սառնամանեաց քեւ ի քաղցրութիւն վերափոխին:

Ժանդք⁹³ խռովարարք քեւ յուրախութիւն գարձցին:

Ամպք կարկտաբերք ի ցաւդ քաղցրութեան քեւ յեղաշրջին:

Շնչմունք վնասակար հոգմոց ի սիւք⁹⁴ ախորժութեան քեւ երեւեսցին:

Ժամանակք ապականիչք արդեանց մերոց գարուն Հանդարտական քեւ մեզ ցուցին:

Նաւավարութիւնք ծովագնացիցն քեւ առաջնորդին:

Վաստակք երկրագործութեան մերոյ քեւ արդիւնասցին:

92 պատճառ

93 ժանկք:

94 սիւք:

Ձենմունքդ առանց մերոց եւ բուրմունք խնկոց, որ յանուն եւ ի փառս Միածնի քո, քեւ հաճոյացի:

Նուէրք մեր եւ պատարագք, որ յանուն ննջեցելոցն, քեւ ընդունելի լինիցի:

Ողջակեզք մեր եւ զոհք եւ ամենայն, որ ինչ յաղագս մեռելոց, քեւ կատարեսցին:

Խնդրուածք մեր եւ պաղատանք քեւ առաջնորդեալ ընծայեսցի ի սեղան փառաց Միածնի քո, եւ տարածեսցի շուրջ զփառաց Աթոռոյ Նորայ, եւ չիք ինչ առանց քո հաճոյ եւ կամ պիտանի:

Քեւ խորհեցաւ մեզ ելք կենաց,

Քեւ ընդարձակեցաւ մեզ ճանապարհ յուսոյ,

Քեւ ուրախացան յամեալքն զնդանաւ,

Քեւ արձակեցան կապեալքն մեղաւք,

Քեւ բարձան անեծքն տրտմագին, զոր ընկալան ի բերանոյ Արարչին՝ վասն գառնութեան վաղուեանն գրախտին:

Զարթիք, զարթիք գումարութիւնք մարգարէիցն եւ լսելի արարէք նախահարն Ագամայ, թէ՛ Ահայ յանկ ելեալ աւարտեցան բանք մեր, որ վասն կապանաց քոց մարմնանալոյ Որդոյն Աստուծոյ. «Ահաւասիկ դայ Տէր Զաւրութեանց»⁹⁵ եւ թէ՛ «Զարթեաւ որպէս ի քնոյ Տէր»⁹⁶, եւ թէ՛ «Նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց»⁹⁷, եւ թէ՛ «Նովաւ կեցցէ ամենայն մարդ», եւ թէ՛ «Զհետ Նորա երթիցեն մեծամեծք ի թռչնոց», եւ թէ՛ «Ողորմեցաւ Տէր Սրոնի»⁹⁸, եւ թէ՛ ասել կապելոցն, թէ՛ ելէք, եւ մեռելոցն, թէ՛ Յայտնեցարուք, եւ թէ՛ «Արի, որ ննջեալ»⁹⁹, եւ լուսատու լիցի քեզ Քրիստոս: «Ահա ժամանակ ընդունելի եւ աւր փրկութեան մերոյ»¹⁰⁰, եւ թէ՛ «Ահա, դամ ժողովիլ զամենայն ազգս»¹⁰¹, եւ «Գա Տէր եւ հատուցանէ զգատաստան իւր»¹⁰²: Զայնեցէք Եւայի, թէ՛ Արի եւ փարատեալ զսուգ տրտմական, քանզի «ծնաւ քեզ ի դստերէն քումմէ Փրկիչ, որ է Աւծեալ Տէր ի քաղաքի Դաւթի»¹⁰³, արի եւ մի տրտմիր, խնդակից լիւր ընդ մեզ, արի խրախացիր, զի ժամանակ փրկութեան քո է հասեալ, արի բերկրալից ուրախութեամբ եւ պարեայ ընդ Հրեշտակս, զի վերստին տուաւ քեզ, զոր մերկացար մեղաւք, եւ զի թէպէտ դու եղեր պատճառ մահու եւ դատապարտութեան, սակայն ի շառաւեղէն քումմէ ծնաւ քեզ ազատութիւն: Բարձրացոյ զձայն քո, գոչեալ զաւրութեամբ եւ մի՛ խնայէր, Հնչեալ ի լսելիս ամենայն ազգաց, թէ՛ Դուստրն իմ ծնաւ զստեղծիչն իմ, եւ «Ամենայն որ ի Նայ հաւատասցէ, մի՛ կորիցէ»¹⁰⁴: Այսաւր կատարեցան զրեալքն մարգարէիւքն հանդերձ, որ վասն դստերն իմոյ, աւրհնեցէք ամենայն ազգ զՆայ, որ եկն եւ եղեւ մարդ, եւ գնեաց զմեզ յանիծից աւրինաց: Աւրհնեցէք ամենայն ազիրնք զԱրարիչն արարածոց, որ փոխանակ ուրախութեան, որ Նմա առաջի կայր, յանձն էառ զմահ, եւ արհամարհեաց զամաւթ, եւ զմեզ յամաւթոյ ծառայութեանց ազատեաց, զՆայ աւրհնեցուք, զՆայ գովեսցուք, Նմա երկրպագեսցուք, պաշտեսցուք, խոստովանեսցուք, որ հաճեցաւ ծնանիլ ի սրբոյ Կուսէն Աստուած ճշմարիտ եւ Մարդ կատարեալ:

Ո՛վ Աստուածածին Մարիամ, զքեզ դաւանեմք ճշմարիտ Մայր Աստուծոյ Բանին, զքեզ

95 Վմմր. Եսայի ԽԲ 13:

96 Սղմ. ՏԷ 65:

97 Մկրթ. ա 21:

98 Եսայի ԾԲ 5:

99 Եփես. Ե 14:

100 Բ Կորնթ. Զ 2:

101 Եսայի ԿԶ 15:

102 Եսայի ԼԵ 4:

103 Ղուկ. Բ 11:

104 Յովհ. Գ 16:

Հաւատան եկեղեցիք ուղղափառաց, զքեզ երանեն, ըստ քում Հրամանի ամենայն ազգ:

Դու բարեխաւս ընդունելի,

Դու միջնորդ խաղաղութեան առ Որդիդ քո Աստուած եւ առ մարդիք: Խնդրեայ Աստուածածին Մարիամ յՈրդոյ քումմէ՛ զխաղաղութիւն ամենայն աշխարհի, զՀաստատութիւն եկեղեցոյ եւ զանշարժ յուսադրութիւն մանկանց Սիրնի: Բարձ ի մէնջ զխռովութիւն եւ զամենայն ցաւս պատուհասի զմահ տարածամ եւ զսով եւ զգերութիւն եւ զամենայն Հրաման ցասման, յիշեա եւ զՀոգի ննջեցելոց մերոց, որք կատարեցան ի տիս Հասակի, առ քեզ կայցես յանձին յաւուրն ահեղի եւ աներեկի՝ շնորհել նոցայ ներումն յայն ի սոսկալի եւ ի մեծի աւուրն, եւ ամենեցուն ի քեզ Հաւատացելոց զՀանգիստն երկնային եւ զանվախճան¹⁰⁵ ուրախութիւն պարգեւեայ եւ արժանացոյ կրկնակի կենաւք զքեզ եւ զծնեալն ի քէն աւրհնել ընդ Հաւր Իւրում եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՆՈՐԻՆ ՄԵՂԱՊԱՐՏ ՅՈՀԱՆՆԵՍԻ ԱՇԽԱՐՀԻ ԻՐԻՑՈՅ ԱՍԱՅԵԱԼ Ի ՍՈՒՐԲՆ
ՍՏԵՓԱՆԵՆՈՍ, ԶՈՐ ԵՒ ՆՇԱՆԱՅԻ ԱՍԱՍՅԵՆ ՅՈՒՍԿԱՆՆ ՈՐԴԻ, Ի ՅԱՆԱՊԱՏՆ
ԱՐԳԵԼԱՆԱ, ՈՐ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՈՐԱ ԱՆԱՐԱՏ ԿԱՅ Ի ՆՈՅՆ
ՎԱՆՍ Ի ԳԵՐԵՋՄԱՆԻ¹⁰⁶

Յարփաւոր եւ ի Հրաշանիւթ¹⁰⁷ լուսոյն ջահ վառեալ Համատարած ծագմամբ մշտափառ եւ անստուեր անելի¹⁰⁸ Յուսկանն որդի տէր Ստեփաննոս, երջանիկ Հայր, գերամաքուր բարունի երկնագնաց ուղեւոր, երկնաքայլ ճանապարհորդ Հրեշտակական՝ զնացիւք, սրովբէական՝ ընթացիւք: Անճառին տեսաւդ, անՀասին Հպեալ, անքննելոյն խաւսակից, անզննելոյն՝ գիմաբան¹⁰⁹, երկնաւորին սրբեալ, կենարարին մաքրեալ, կենսատուին յարգարեալ, Երրորդութեանն տաճարացեալ: Հրեշտակաց ցանկալի, Հրեշտակապետաց Համանման, ընդՀանուր¹¹⁰ բարեխաւս, ցասմնականացն մերժող, գիւականացն Հալածաւդ, չար այսոցն Հերքաւդ, լիզէոնացն փախուցաւդ, աւատաւոր ձայն, ցնծութեան ցոյց¹¹¹, ուրախութեան պատճառ, խրախութեան առիթ, բերկրութեան բերաւդ պատճառ, Հայաստանեայցս քարող, քրիստոնէից պարծանք, եկեղեցոյ վայելչութիւն, Հայրապետաց սահման, վարդապետաց քանոն, քահանայից շնորհք, վանականաց փառք, կրաւնաւորաց ժուժկալութիւն, սակաւագաց պսակ, միայնացելոց պարիսպ, անապատականաց խրատ, ամուսնացելոց պարկեշտութիւն, երիտասարդաց ուսուցիչ, կուսանաց ամբուլութիւն, նաւակոծելոց նաւահանգիստ¹¹², վտանգելոց խաղաբար, տարակուսելոց անդորրութիւն, արագահաս աւգնական: Յաւրինակ Քրիստոսի առ ամենեսեան գթած, ամենեցուն ողորմած, ամենեցուն խնամաւդ, ամենեցուն պահապան, ամենեցուն աւգնական, ամենեցուն սփոփիչ, ամենեցուն զատաւարակ, ամենեցուն եւ առ ամենեսեան ձրի պարգեւ: Տանս Հայկաստանեայց պարիսպ ամուր եւ անվանելի պարիսպ ամուր եւ անխախտելի, պարիսպ Հաստատուն անշարժ եւ անքակտելի՝ երկոյտասան քարամբք կառուցեալ, ձեռամբ կենարարին ամրացեալ, պնդեալ կարծր եւ ամուր արձանաւք Հաստատնաւք, վիմաշէն խորանածեւ

¹⁰⁵ զանվախճան:

¹⁰⁶ Աղբյուր ՄՄ ձեռ. 731, թ. 290ա-303բ:

¹⁰⁷ ՉիքՆԲՆ:

¹⁰⁸ չիքՆԲՆ:

¹⁰⁹ ՉիքՆԲՆ (բայց՝ դիմաբանեմ):

¹¹⁰ ընթեանոր:

¹¹¹ ցոյց:

¹¹² նաւահանգիստ (այսպէս եւ այլուր):

կամարանման լայն եւ երկայն յարկ ապաւինի եւ տեղի ապաստանի բոլորեցունց ազանց անուանակիր սրբոյն նախնոյն Ստեփաննոսի: Ընդ նմին եւ համանման վարուք մաքրական եւ գործաւք առաքինութեան Յուսկանն որդի տէր Ստեփաննոսի ի Տարբերունոյ գաւառի յանապատին Արգելանայ, որ ունի զնմանութիւն մեծին Երուսաղէմի, եւ համանման ոսկերչութիւն¹¹³ Գողգոթայի, ուր բարձրացաւ խաչն աստուածունակ յԵրուսաղէմ գերեզման ստեղծաւորն զքեզ եւ Գողգոթայ տեղի խաչեցելոյն. անդ խաչն եւ խաչեցեալն եւ ընդ քեզ ի քումդ անապատի՝ սուրբ նշանդ աստուածաբարձ՝

ի քէն կազմեալ եւ յԱրարչէն աւրհնեալ,

ի քէն տաշեցեալ եւ յԱստուծոյ աւծեալ,

ի քէն գծագրեալ եւ արեամբն Քրիստոսի ներկեալ,

ի քէն քանդակեալ եւ անեղին աջով զաւրացեալ. աստուածունակ, աստուածաբարձ, աստուածընկալ, ստոյգախաւս եւ փող մեծագոյն, կենաքարոզ¹¹⁴ եւ կենազծակ¹¹⁵ աղենամտին¹¹⁶ եւ գուռն եւ կենաց ձայնին կարապետ, երկնային սանդուխ, լուսակիր աշիտճան, ընդարձակ ճանապարհ, Բարձրելոյն բարձաւդ եւ պարգեւաբաշխ ծառոյն զիտանոց, ընդ քեզ երկրպագի ի քումդ անապատի հայր բազմահանճար եւ գերիմաստուն, հրեշտակակրաւն ճգնաւոր, քրովբէանման միանձուն, սրովբէանման առաքինի՝ համեմատեալ վերնականացն զասուց: Մովսէսի նման, Եղիայի աւրինակ. Մովսէս գաւազանաւն հերձեաց զծովն համատարած, իսկ գու քրինակազմն¹¹⁷ նշանաւ խաչիդ բաժանեցեր զքէն ուսեալ եւ հաւատացեալ ժողովուրդս ի հերձուականացն մոլորութենէ: Եղիա համբարձաւ մարմնով ի վեր ի յերկինս, իսկ գու մարմնական աչաւք տեսեր զՏէրն երկնի եւ երկրի՝ խաւսակից գոյով ի բերան ի բերան:

Ձորպիսի¹¹⁸ բանս գովասանականս յաւրինեցից քեզ աղքատս եւ կարաւտեալս, չքաւորս եւ տառապեալս, գուցէ տարակուսեալ լքանիմ յանգիմանեալ ի բազմայժողով անաւրէնութեանց եղկելի անձինս եւ կամ զարհուրեալ սասանիմ ի մարգարէագոյն¹¹⁹ ձայնէն Դաւթայ, որ առ նմանիսն իմ քարոզէ, թէ սակայն մեղաւորին ասէ Աստուած, իսկ գու ընդէ՞ր պատմես զարդարութիւն իմ եւ կամ առնուս գուխտ իմ ի բերան քո, ապա զի՞նչ արարից ողորմելիս եւ տարակուսեալս անձամբ, բայց եթէ վստահացայց ի քոյդ զաւրութիւն, զքեզ յայտնեցից զզանձդ Աստուածական, զթաղեալդ յանապատիդ Արգելայ. զմարգարիտդ ընտիր շարեալ ի շարս երկնաւորին զաւկնդ¹²⁰ պատուական վայելչութիւն եղեմական զրախտին զարեզակնդ լուսածաւալ, զՋահգ¹²¹ լուսատու, զճրագդ անաղաւտ, զղամբարդ մշտավառ, զլապտերդ¹²² բազմալոյս, զսիւնդ երկնային ելք բարձրութեան հանուրդ¹²² քրիստոնէից:

Տէր Ստեփաննոս՝ ջուր բխեալ յանապատէ քաղցր եւ յստակ ի քիմն ճաշակողաց, աղբիւր բարեհամ յորդահոս վտակ, առատագնաց ծաւալ, հեղեղաւրէն սփիւռ, համեղական բխումն, զովացուցիչ պասքեցելոց անձանց:

Սուրբ Ստեփաննոս՝ հոռ անուշ բուրեալ ի պատշաճաւորն լեռնէ, նարդոս եւ քրքում հանդերձ հայուէիւ, անուշահոտ ծաղիկ, զուարթարար հոռ, վայելուչ բուրաստան, գեղեցիկ բարունակ՝ բարձրացեալ բարութեամբ մերձ ընդ երկինս:

113 ոսկերչութիւն:

114 ՉիքՆԲՇ:

115 ՉիքՆԲՇ:

116 ՉիքՆԲՇ:

117 ՉիքՆԲՇ:

118 ՉիքՆԲՇ:

119 գաւկնդ (պսպեա եւ պյուր):

120 գջախի (պսպեա եւ պյուր):

121 զլապտերդ:

122 հայուրդ:

Սուրբ Յուսկանն որդի տէր Ստեփաննոս, վէժ հնչողական հաւուց վերնականաց, էջ հանգստեան¹²³ եւ ընդ սոսին ձայնակից, քաղցրաձայն տատրակ, անուշանուագ¹²⁴ ծիծեառն, ողջախոհ աղանի, վերնագնաց թռչուն, բարձրաերամ¹²⁵ հաւուցն հաւասարեալ:

Սուրբ Ստեփաննոս՝ ընտրեալ ազգաւ եւ տոհմիւ, հովիւ քաջ, առաջնորդ բարի, արդարութեան քարոզ, իրաւացի բարբառ, ճշմարտութեան յայտնիչ, ուղղափառ հաւատ, ուղղափառաց ուսուցիչ, ուրացութեան խափանիչ, հայհոյականաց փախուցիչ, երկարնականց ամաչեցուցիչ, հերետիկոսաց¹²⁶ ընդոտնիչ, հերժուածաւղաց քակտիչ, արիւնականաց հերքիչ, նեստորականաց անարգիչ, զՔրիստոս Աստուած դաւանաւ: Խաւսիս որպէս հրեշտակ, բարբառիս որպէս սերովբէ:

Զի՞նչ կոչեցից գրեզ, տէր Ստեփաննոս. աղ երկրի եւ լոյս աշխարհի, որ զանհամութիւն մարդկան ի համ քաղցրութեան փոխարկեցեր եւ զմռայլ մթութենէ ի լոյս դարձուցեր: Իմաստուն բժիշկ, ճարտար քաւիչ, հոգեկան առողջացուցիչ:

Սուրբ Ստեփաննոս՝ արեգակնափայլ ճառագայթ ի մէջ աստուածափայլելուց դրախտին, պայծառ արուսեակ ի մէջ: Բազմափայլ աստեղաց, ակն լուսատու շուրջ գգերապայծառ առ մարգարտաց, պարծանք պարծանաց հայեաստանեաց զարմից, խարիսխ լուսոյ, քանոն հաւատոյ, զարդ փառաց, շուք գիմաց, հովանի գլխոյ, բացումն բերանոյ, բարբառումն ձայնից, արագախաւսութիւն լեզուաց:

Սուրբ Ստեփաննոս՝ քրիստոսականաց պահապան, յիսուսականաց¹²⁷ աւգնական, աստուածականաց հովանի, թագաւորաց յաղթանակ, արքայից զաւրութիւն, իշխանաց հաստատութիւն, բարբարոսաց խաղաղութիւն:

Զի՞նչ կոչեցից զսուրբ հայրդ¹²⁸ բազմահանճար եւ գերիմաստուն. Երրորդութեան աւթարան, Երրորդութեան տաճար, յորում Երրորդութիւն բնակեացէ ի քեզ սիրողապէս, ըստ անսուտ իւրումն խոստմանն միոյն ի յէիցն վասն սիրելոյն զՆա եւ Իւր եւ Հաւր եւ Հոգւոյն առ Նմա աւթեւանեալ:

Սուրբ Ստեփաննոս, որ յստակ¹²⁹ եւ սուրբ քարոզեցեր զհաւատ Երրորդութեան ըստ ամենայն տիեզերս, որ անապական յայտնեցեր զխորհուրդ Երրորդութեան յամենայն ազգս, որ զիւրալուր քարոզութեամբ հաստատեցեր զհաւատացեալս, որ լուսափայլ վարդապետութեամբ պայծառացուցեր սուրբ եկեղեցի, որ զմիութիւն երիս անձանցն անշփոթ պատմեցեր եւ անձամբ բաժանե անքակ յայտնեցեր՝ ոչ կրտսերութեամբ զՈրդի քան զՀայր քարոզեցեր եւ ոչ նուազութեամբ զՀոգի քան զՈրդի եւ զՀայր ճառեցեր, եւ ոչ մեծութեամբ զՀայր¹³⁰ քան զՈրդի եւ զՀոգի պատուեցեր, այլ մի եւ նոյն համապատիւ տէրութեամբ մեծարեալ պատուով¹³¹ զմեզ ուսուցեր՝ դաւանել ընդ քեզ միշտ եւ աւրհնել ի հաւատս անբիծս յուսով հաստատնով՝ աներկբայ եւ անայլալական:

Սուրբ Ստեփաննոս քաղցրաձայն սաղմոսերգու, անուշահոտ բարբառ, խնկանման բուրբումն՝ ստաշխիւ եւ կենամոնաւ խառնեալ: Ամենեւին բարի, ամենեւին շնորհք, ամենեւին երանութիւն: Կենաց ապաւէն, պարգեւ բարի՝ ի բարեբարէն պարգեւեալ:

Սուրբ Ստեփաննոս՝ երկնաւոր Հաւրն որդի հարազատ, որ ունիս զնմանութիւն յաւէտ

123 հանկսպեան:

124 ՉիքՆԲՇ:

125 ՉիքՆԲՇ:

126 Երեւելիկաց:

127 ՉիքՆԲՇ:

128 Խայր:

129 Ըստական:

130 զՀայր:

131 պապով:

խկապէս, մարդասէր, ողորմած, գթած, կատարեալ, առատաձեռն, խնամակալ առ ամենայն ազգս տիեզերաց՝ ոչ միայն հաւատացելոց, այլ եւ ամենայն խառնիճաղանջ¹³² ժողովրդոց. հրէականաց եւ հեթանոսականաց, ընդ որս կոչեցար եւ կոչեցեր զտիեզերս յորդեգրութիւն Հաւրն երկնաւոր՝ յաւրինակ արի երջանկին եւ հաւատոյ վիմին սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին:

Սուրբ Ստեփաննոս՝ եզն ամուլ, քաջ¹³³ եւ հերկաւոր¹³⁴, երկնաւոր սերմանն մշակ արդիւնարար ի յանգս հոգւոց տէրութեամբ հաստատեալ, խաչին նշանաւ հետեւեալ:

Սուրբ Ստեփաննոս՝ քաղաքավար ճարտար, քաղաքակից սրբոց, գասակից երկնայնոցն, պարակից վերնոցն, երամակից հոգեղինացն, ձայնակից հրեղինացն, րախճանակից համայն վերնականացն՝ մի եւ նոյն հրեշտակ մարմնաւոր իբր զՆոսայ՝ մաքուր առաքինութեամբ՝ արագընթաց, արագալուր, հրեղէն թեւոց սլացմամբ, զկամս կենարարին կատարելով, զբարերարութիւն Նորայ յայտնելով, զխնամս քաղցրութեան նորայ ցուցանելով եւ զգութ սիրոյ Նորայ ծանուցանելով, որդիական խնամարկութեամբ:

Սուրբ Ստեփաննոս՝ պսակ փառաց ի գլուխ եկեղեցոյ, կամար ականակապ խորանաց սրբոց, վէմ անտաշ ի հիմունս Սիոնի, որ ոչ գծեաց ի քեզ մուրճ ինչ սրեալ չարին կայծակամբ:

Սուրբ Ստեփաննոս՝ սնեալ ի լեռն սրբութեան որով աւրինակաւ աւրինակեցից զլեռնոց ոսկեղիտակ¹³⁵. յայտնապէս Երուսաղէմ ուխտ երկնահանգէս եւ աստուածընկալ, յորում բարձրացեալ ճոխանա տաճար Տիրամաւրն եւ Աստուածածնին եւ նշանդ սուրբ եւ աստուածընկալ եւ գերեզման հանգստեան քո սուրբ ոսկերացդ, լեռն բարձրապատիւ եւ հռչակաւոր՝ յաւրինակ սրբոյ քաղաքին Երուսաղէմի. անդ գերեզման արարչին Յիսուսի եւ տաճար հանգստեան տիրածին Կուսին Մարիամոն Աստուածածնին եւ ոսկերչւորն Գողգոթեայ¹³⁶, յորում Աստուածն խաչեցաւ անթերի մարդկութեամբ եւ անպակաս Աստուածութեամբ: Իսկ ի լեռնոց գերամբարձ գերեզման քո սուրբ լուսանորոգ եւ արփիաչէն¹³⁷, որ հանապազ աղբիւրանա ի մեզ շնորհ աստուածային եւ տաճար Աստուածամաւր Կուսին, յորում անթերի հաւատամբ ի նմա զՄայրն Աստուծոյ՝ յաշակերտաց վերնոյն հիմնեցեալ եւ Նշանն սուրբ, յորում տարածեցաւ Աստուածն բոլորից, որ ի շարժելն Իւրում շարժէ զկամս Հաւրն ի յուրախութիւն:

Սուրբ Ստեփաննոս՝ յանապատի դաստիարակեալ աճեալ եւ զարգացեալ հրեշտակակրան անբծութեամբ, ըստ Յոհաննոս եւ Նիկիայի եւ զհամացեղս նոցայ քաղցրախաւսուն հաւուցն նմանեալ, սուրբ ստեղծեալ յարգանդէ եւ ի նոյն յամեալ մինչեւ ի կատարած:

Սուրբ Ստեփաննոս՝ ծաղիկ գարնանայնոյ յափունս ջուրց գեղեցկագոյն երանգաւ¹³⁸ զարդարեալ եւ բողբոջական տերեւով փթթեալ անթառամելի:

Սուրբ Ստեփաննոս՝ երկիր բանական, յորում սերմանեցաւ ի քեզ զպտուղն արգասաւոր, զոր սփռեցեր ի գաշտս հոգւոց եւ արդիւնացուցեր շայեկանութեամբ Տեառն եւ կենարարին:

Սուրբ Ստեփաննոս՝ այգի վայելուչ շուրջ պատեալ ցանկով¹³⁹ արդարութեան, յորում ոչ գտաւ ի քեզ մուտ չարին, քանզի հաստատեաց զքեզ հիմամբ այն, զոր ասէ մարգարէն, եւ ի քեզ արդիւնացաւ պտուղն կենաց հոգւոց կերակուր եւ կեանք յաւիտենական:

Յուսկանն որդի Ստեփաննոս, որ հանապազ հոգաս ընդ մեր, որ ոչ զազարիս ի խնամոց,

132 խառնիճաղանջ:

133 քաջ:

134 ՉիքՆԱՇ:

135 ՉիքՆԱՇ:

136 Նմնր. Կիւրեղ ներք. Խաչի:

137 ՉիքՆԱՇ:

138 Երանկաւք:

139 ձանկով:

այլ միշտ կեցողացանես գրո ժողովուրդս, որ զանց առնեալ մերով անարժանութեամբս, զի գրոյդ ցուցցես զիրաւունս արդարութեան:

Սուրբ Ստեփաննոս, որ առնես նշանս եւ արուեստս մեծամեծս ի ժողովրդեան՝ յաւրինակ նախնոյն մեծի, ուր յիշեմք, անդ վաղվաղակի Հասանես, ուր Համբաւեմք, անդ արագապէս յայտնիս, ուր քարոզեմք, անդ փութով մատչիս, ուր աւետարանեմք, անդ շտապով մերձիս, ուր պատմեմք անդ սրաթուիչ երեւիս ի կեանս¹⁴⁰ եւ յառողջութիւն Հոգւոց եւ մարմնոց միայնգամեան ամենայն Հաւատացելոց ի քեզ ապաւինելոց:

Սուրբ Ստեփաննոս՝ բազմաշահ վաճառական, բիւրահատոյց¹⁴¹ վաստակաւոր, փարթամ արգիւնարար, քաջաժողով¹⁴² երկրագործ, մշակ երկայնամիտ, սպասող պատուական պտղոյ երկրին մինչեւ առեր զկանուխն եւ զանագանն:

Սուրբ Ստեփաննոս, որ զերկնաւորին ժողովեցեր զպտուղ, որ զԱստուծոյն Հաւաքեցեր զարգիւն, որ զԱրարչին լցեր զգանձ: Նախ սերմանեցեր, ըստ մարգարէին եւ ապա Հնձերցեր քեզ արդարութիւն¹⁴³ եւ մեզ պտուղ կենաց կենդանութիւն, քեզ փառք երանական եւ մեզ Հանգիստ յաւիտենական, քեզ պարծանք վայելչական եւ մեզ ազատութիւն ի նեղութենէ, քեզ երանութիւն եւ մեզ ի վտանգի¹⁴⁴ անդորրութիւն, քեզ իշխանութիւն ունել, ըստ Աւետարանին տասնեկին քաղաքաց, եւ մեզ ազատիլ յաւիտենականն պատժոց մեղաց:

Սուրբ Ստեփաննոս՝ քաղաք ամուր՝ շինեալ ի վերայ լերինն Հաստատոյ, ճրագ լուսատու, յաշտարակիդ բարձրութեան, ոչ թագուցանիս քաղաքդ, ոչ ընդ գրուանաւ մոլծանիս ճրագդ, ոչ ի խոնարհ զիջանիս բարձրեալդ, ոչ ընդադաւտանաս լապտերդ, ոչ ստուերանաս լոյսդ, ոչ ծածկիս գանձդ, ոչ մթնանաս ջահդ պայծառափայլ: Քանզի մահու անիծիւք պատժին, որք Հակառակն կան Հրամանին Աստուծոյ, որ ասէ, թէ ոչ կարէ քաղաք թագել, որ ի վերայ լերինն կայցէ, եւ ոչ լուցանեն ճրագ եւ զնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի եւ լոյս տա ամենեցուն, որ ի տանն իցեն¹⁴⁵: Ապայ զիս՝ ըրդ կարասցուք ի վայր ծածկել վարագուրաւ զբարձրեալդ քան զերկինս: Դու եւ քան զոքունս զերագոյն գտար զարութեամբ մինչեւ Աստուծոյ եղեր խաւսակից, մինչեւ Հաւասարեցար զասուցն անմարմնոց, մինչեւ կատարեցեր զՀրամանաւսն մարգարէիւքն Հանգերձ, մինչեւ իննուց երանութեանցն արժանացար Հոգով:

Սուրբ Ստեփաննոս, ի գործս քո փառաւորի Հայրն ամենակալ ի վարս քո գովի Որդին Աստուծոյ, ի ճգնութիւնս բարեբանի Հոգին Աստուծոյ: Ասեմ եւ ոչ ամաչեմ, ասեմ եւ ոչ պատկառեմ: Բարձրացուցանեմ եւ ոչ ծածկեմ, ձայնեմ եւ ոչ լռեմ, խաւսիմ, ըստ Դաւթայ առանց ամաչելոյ որպէս զԱստուծոյ եւ զԱստուծոյ սիրեցելոյ յայտնապէս եւ ոչ թագնաբար:

Սուրբ Ստեփաննոս՝ Հրամանակատար Արարչին, բանապահ Փրկչին:

Դու զերկրաւորս արՀամարՀեցեր:

Դու զմեծութիւնս սնոտիս անարգեցեր:

Դու զանցաւորս Հոտեցեր:

Դու զյաւիտենականն առեր զպատիւ:

Ձայն, ուր արքայն է, եւ արքայազունքն իւր:

Ձայն, ուր թագաւորն է, եւ թագաւորեալքն իւր:

Ձայն, ուր Արարիչն է, եւ պատուեալքն իւր:

Ձայն, ուր Աստուած է, եւ պսակեալքն իւր:

Ձայն, ուր Յիսուս է, եւ Հրաւիրեալքն իւր:

140 կանս:

141 ՉիքՆԲՏ:

142 ՉիքՆԲՏ:

143 Նմմութ. Ովստ Ժ 12:

144 վրանկի:

145 Տիմ Մկրթ. Ե 14-15:

Ջայն, ուր հովիւն է քաջ, եւ հաւտք իւր:

Ջայն, ուր Փնսայն է անմահ, եւ փնսաւերքն իւր:

Ջայն, ուր Տէրն է տերանց, եւ ընտրեալքն իւր:

Ջայն, ուր Բաբունապետն է երկնային, եւ աշակերտեալքն իւր:

Ջայն ուր Հզաւըն է զաւրութեանց, եւ զինուորք իւր, զշխոյն պանծալի, եւ աւրիորդք իւր, առագաստն լուսոյ եւ մանկունք իւր, Կոյան տիրածին, եւ զգաստացեալքն¹⁴⁶ իւր, Մայրն կենարարին, եւ մաքրեցեալքն իւր, Հարսն լուսոյ, եւ լուսաւորեալքն իւր, Խաչն տիրէնկեալ¹⁴⁷ եւ փայլածուք իւր, Նշանն սուրբ արեամբ կենարարին ներկեալ, եւ շառաւեղք իւր: Եւ այլ անթիւ բարիք պարգեւեալք ի բարերարէն Աստուծոյ անձինք մաքուրք իրբեւ զքեզ կատարեալք յամենայն Հաճութիւնս միոյն Աստուծոյ Քրիստոսի երամբ վերնականացն ի յանէից գոյացուցչին գոյացեալք Հզաւըն զաւրութեանց: Եւ բոյլք բանականաց, մարգարէութիւնք սրբոց ընտրեալք¹⁴⁸ յառաջ եւ յայտնիչք տնաւրէնութեան Որդոյն Աստուծոյ, եւ աշակերտութիւնք առաքելականաց սրբոց եւ սրբազանից, սպասաւորք եւ սեղանակիցք, ակնատեսք եւ աթոռակիցք աւրհնեալք յամենաւրհնեալ բերանոյն Աստուծոյ, զատիչք երկոտասան ազգաց, ընդ նմին եւ Հայրապետութիւնք երջանկաց եւ լուսապնդանիւթ վարդապետաց ուղղայդաւանից՝ լցեալք յամենառատ շնորհաց Հոգւոյն, պայծառացեալք իրբեւ զքեզ քաջազուն եւ սրբամաքուր անարատութեամբ իրբեւ զզլուին սխրալի Հանդերձ աշակերտեալ մանկամբք¹⁴⁹ երջանիկն եւ փառաւորն, լուսաւորիչն Հանուրց տիեզերաց, անունն պարծանաց, քաջն եւ զարմանաւորն, Հարաւար Հարչարակիցն Հարչարանաց Որդոյն Աստուծոյ, ակնն տպագիրոն, արեգականափայլ ճառագայթն, արփաւոր սիւնն, լուսատու սանդուխն, երկնաման երկիրն, ցաւալից ամպն, պարարտացեալ հովիտն, քաջաբեր անգաստանն, պտղալից այգին, Հայաստանեացս զարդն, բուն բարին ի բարեաց պարգեւաւդէն պարգեւեալ Գրիգորիոսն անուն: Որով եւ գու սկիզբն¹⁵⁰ բարեաց տէր Ստեփաննոս արեգականափայլ պայծառութեամբ փայլես ի մեջ լուսազարմից արանց, եւ քրիստոսազգեսց զարգարեալ երեւիս ի դասս մաքրեցելոց անձանց, որով գերապանծ¹⁵¹ պնծութեամբ թագազարդեալ ընթանաս ընդ առաջ կենարարին:

Դու արեգակնաւրէն պայծառութեամբ փայլես յարքայութեան Աստուծոյ:

Դու եւ ի մարմնի գոլով քան զանմարմինսն գերագոյն գտար:

Դու Հոդանիւթեայ բնութեամբք քան զհրեղէնսն բարձրագոյն ցուցար:

Դու երկրածին ի յերկրէ մտաւք մեզչականաւք¹⁵² արձանացեալ ի մանկութենէ եւ քան զանհրէթականսն մաքուր գտար հոգւով:

Դու յամեցար ի մարմնի վարուք մաքրութեամբ, որպէս հրեշտակ ի փառաբանութիւն Աստուծոյ:

Դու վարեցար յաշխարհի ճնշեալ մարմնով, որպէս զուարթուն յերգս փառաբանութեան Բանին Աստուծոյ:

Դու Հանդուրժեցեր կրից աշխատութեան բազում Հարչարանաց, որպէս քերովբէ ի ձայն փառատրութեան Որդոյն Աստուծոյ:

Դու խաչակիր երեւեցար յերկրի բնաւից Ստեղծաւդէն, որպէս զվերնայինսն յանլուելի աւրհնարանութիւնս Հզաւր թագաւորին:

146 սգաստացեալքն:

147 ՉիքՆԲՆ:

148 ընդորեալք:

149 մանկամբք:

150 սկիսքն:

151 գերապանծ:

152 ՉիքՆԲՆ:

Դու խաչակից խաչեցելոյն չարչարական մարմնով, որպէս հրաբուռն զարթոն ի փառաբանութիւն վերին Արքային:

Դու ընկալար յանձին քում լուծ խոնարհութեան ի բերանոյ մարգարէէն յԱրարչէն ազգեալ եւ հաւասարեցար վերնականացն պարուց:

Դու լաւ համարեցար զմահ չարչարիլ մարմնով եւ ընդ Տեառն մեռանիլ քան զառաւրեայ կեանս աշխարհիս, վասն զի մեծութեան վարձուց ակն ունէիր, որով առէր իսկ:

Դու զգանձս յերկինս գանձեցեր անկեր ի ժանգոյ¹⁵³ եւ անապական ի ցեցոյ եւ աներկեղ ի գողոյ՝ գանձեալ եւ պահեալ պահպանական աջովն տիրականաւ մինչեւ հատուցէ քեզ ի մէջ բազմամբոխ ստեղծականաց:

Դու զվաստակս շահիցն յերկինս համբարեցեր ի ծոց զընաւս կրաւղին, որով յայտնապէս կացուցցիս ունել իշխանութիւն ի վերա տասն քաղաքաց:

Դու զվաստակս ճգնութեան ի գող Ստեղծաւղին ժողովեցեր մինչեւ ասացէ ցքեզ. «Ծառա բարի եւ հաւատարիմ, մուտ յուրախութիւն Տեառն քո»:

Դու քրտնաջան չարչարանաւք տանջեցար յերկրի բուռն աշխատութեամբ, որով արժանաւորեցար աւրհնիլ յամենաւրհնեալ բերանոյն Աստուծոյ:

Դու մատուցեր զանձն քո պատարագ աւրհնութեան, որով հոտոտեցաւ Տէրն ի հոտ անուշից:

Դու չրջեցար յերկրի, ըստ Գեղեոնի¹⁵⁴ եւ ըստ համացեղս նորայ «Եղկմաշկաւք եւ մորթովք այծենաւք կարաւտեալ, նեղեալ, չարչարեալ, զորս ոչ կարէ արժել աշխարհս»¹⁵⁵, որով պայծառացեալ զարդափայլես ի հանդերձս լուսափայլս եւ նորափետուրս ի վերին հարսնարանին:

Դու ատեցեր զանձն քո ի կենցաղս սնոտիս եւ պահեցեր մշտնջենաւոր եւ յաւիտենական կենացն:

Դու հանապազ վերինն խորհելով, ըստ առաքելոյ, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ¹⁵⁶ որով թագաւորես ծածկեցելոց կենացն Քրիստոսիւ յԱստուած:

Դու փափագեցար նեղ եւ անձուկ ճանապարհին, մինչեւ երանական կենացն եղեր ժառանգորդ¹⁵⁷:

Դու մտեր ընդ դուռն նեղ, այսինքն՝ ընդ ճգնութիւնս բազում¹⁵⁸ աշխատութեամբ, քանզի ել նորայ ընդարձակագոյն է, որ տանի ի կեանս եւ յերանութիւն:

Դու հնազանդեցար լծոյ հեղութեան յաւրինակ կենաց կենարարին մինչեւ հասեր անպատում բարեացն, որ ի Քրիստոս:

Դու զթեւ անբարտաւանութեան խարթեալ խզեցեր եւ հեզ եւ հանդարտ թեւաւք ի յաւգս¹⁵⁹ սլացար:

Դու զթոխ մտաց հպարտութեան գետնոյ հաւասարեցեր եւ խոնարհական զիջմամբ ի բարձունս վերացար:

Դու զսերմն քինուց նախանձու արմատաքի խլեցեր եւ զսեր քաղցրութեան ի խոր աճեցուցեր:

Դու զբոյս ոխական խռովութեան խոհմական սուսերաւ կտրեալ վանեցեր, եւ զգութ սիրոյ անուշութեան սփռեալ տարածեցեր:

153 ժանկոյ:

154 Գեղեոնի:

155 Երբ. ԺԱ 32, 37-35:

156 Կողոս. 2:

157 ժառանկորդ:

158 բազմում:

159 յալթս:

Դու զարմախ անբարչտութեան գործոյ զիգեալ կուտեցեր, եւ հրով ողջախոհութեան կիզեալ այրեցեր:

Դու ի խորհուրդս ամբարչտութեան ոչ հետեւեցար եւ յաթոռս ժանգից՝ անաւրէնութեան ոչ հանգեար¹⁶⁰:

Դու հանապաղ յաւրէնս Տեառն խորհելով¹⁶¹ անյագ բաղձանաւք եւ խոր աճեցուցեր զելումն բուսոյ բերկրութեան:

Դու զգեղեցկութիւն փառասիրութեան հոտեցեր եւ զանարգանս ըստ Աստուծոյ պատուեալ մեծարեցեր:

Դու զգեղ վայելչութեան սնոտի զարդուս արհամարեցեր, եւ զնախատինս աւետարանականս խնդրեցեր:

Դու զսրտմտութիւն ձանձրութեան դիւական ազդման հերքեալ հալածեցեր, եւ զբանակս զաւրացն երկնայնոց պահապան անձինդ հոգացեր:

Դու զճաշակ դառնութեան քնոյ ցնորից ընդոտնեալ ցրեցեր, եւ մտաւք արթնութեամբ յերգս փառարանութեան Աստուծոյ միշտ պարապէիր:

Դու զհոգս տխրութեան երկասիրութեան ոչ ինչ համարեցար, եւ զմշտնջենականն փարթամութիւն յաւետ ընտրեցեր¹⁶²:

Դու զբոյլս բռնակալին վանեալ արտաքսեցեր խորին խաւարաւ եւ զաւրացեալն ապստամբութեամբ յուսոյ պարանաւ անխզելի կապեցեր:

Դու խորտակեցեր զգլուխ վիշապին եւ խայտառակեալ յամաւթ արարեր զնա տիրական Նշանան:

Դու պահեցար ամբողջ ի խաղբից հրապուրողին եւ կատարեալ առաքինութեամբ ի յերկինս փոխեցար:

Յուսկանն որդի տէր Ստեփաննոս, որ զսաստկացեալ պատուհասն, որ յաղագս մեղաց մերոց կուտին ի վերայ մեր, շարժ եւ մահ տարածամ, թրթուր եւ ջորեակ եւ մարախ բազում կսկեցուցանաւ եւ սառնամանիք եղեմնական արագ յայտնեցար հերքաւդ եւ հալածաւդ:

Որպիսի՞ բանակարգութեամբ եւ բիրարեղուն գովեստիւ գովեցից զքեզ. առաքելոցն համեմատ, մարգարէիցն հաւասար, մարտիրոսացն համապատիւ: Իսկ եթէ ընդ դառնալ մեղաւորին յարգարութիւն ուրախութիւն է ի յերկինս Հաւր եւ հրեշտակաց, ասէ Աւետարանն¹⁶³, ընդ քումդ անարատութիւն զի՞նչ պարտ է ասել. ամենեւին սուրբ, ամենեւին մաքուր, ամենայնիւ առաքինի, ընտրեալ ի բիրուց¹⁶⁴, որոշեալ ի մարմնականաց, բաժանեալ ի հողայնիւթից, հեռացեալ ի կրից անցաւորաց, դասեալ ի դասս անմարմնականաց, եւ ընդ մտանել ամենամաքուր հոգւոյդ ի դասս լուսերամիցն, ուր դասք առաքելոցն են եւ պարք մարգարէիցն, ուր բոյլք անմահիցն են եւ գունդք սերովբէիցն, ուր ժողովք մարտիրոսացն են եւ խումբք սուրբ կուսանացն, անդ ուրախութիւն Հաւր եւ ցնծութիւն Որդոյ, խնդայ եւ ընդ նոսին Հոգին Աստուծոյ, եւ խրախացեալ հրճուի Մայր մարմնացելոյ Բանին Աստուծոյ, եւ թէ հանել պատարագ յանարգէն բերան Աստուծոյ կոչեսցին, ասէ ի Գիրս սուրբս¹⁶⁵:

Ընդ անբաւգ քում երախտեաց, զորս ասացից, որ յաւրինակ Նոյեան մեծի նախապետին յայտնեցար ապրեցուցիչ սեռի մարդկութեանս յաշխարհականս մեղաց ծովէ Խաչիւղ փրկչականաւ:

Սուրբ Ստեփաննոս, արեւ անստուեր, լոյս վաղորդեանի, տիւ տենջալի, արփի միջաւրեա,

160 Սղմ. Ա 1:

161 Սղմ. Ա 2:

162 Ընդրեցեր (սխալեալ եւ սխալուր):

163 Տէն Ղուկ. ԺԵ 7, 10:

164 Վմմր. Երգ Ե 10:

165 Վմմր. Երեմիա ԺԵ 19:

պայծառութիւն աւելաց հասարակաց, բացաւ ողորմութեան, առիթ խաղաղութեան, պատճառ բարութեան, շնորհաբաշխ ընդհանրական¹⁶⁶:

Արդ, տարածեմ աստանաւր առաջի քո ամենամեղ հոգիս մեղուցեալ մարմնովս, եւ աւրինակաւ մարգարէին Յովնանու, որ ի պորտոյ կէտին առ բարձրեալն աղաղակէր՝ Հայել զտաճարն սուրբ, անհնարին անդնդաւքն պաշարեալն: Եւ ես ամենամեղս կողկողագին հեծեծանաւք առ քեզ գոչեմ ընկղմեալս ի խորս անաւրէնութեան՝ Հայել չարատես աչաւքս զտաճար քո սուրբ եւ երկնանման: Դնիմ ի դրունս Քո նեխեալ մեղաւք անդամոցս, որպէս զանդամալոյծն առ ոտս Արարչին, զի եւ ինձ ասացես արարչականն բերանով¹⁶⁷, թէ մի՛ լար գերի, բազմաց ողբալի, արի ի բազմամեայ հիւանդութենէդ, եւ երթ, կանգնեալ ի մեռելութենէդ եւ գնայ, յոտն կաց, մանրեալ անդամաւքդ, եւ վագեայ: Դիր ի վերայ նենգահայեաց¹⁶⁸ տեսարանացս աստուածանման ձեռաւքդ յերկնային հոգոյդ, եւ ասա ընդ բերամեա կոյրս, թէ՛ երթ, լուայ յաւազանին սելովմանման¹⁶⁹, եւ տեսցես: Կալ կենարար աջովդ զգաւսացեալ ձեռս ի վաղուց ժամանակաց մեղսաթաթախ եւ անբժշկական, եւ չրջեցոյ զխախտեալս¹⁷⁰ Հայել եւ տեսանել զքեզ եւ զքոյրդ առանց ցաւոց եւ ապականութեան: Եւ յորժամ պարառական պարառութեամբ պարեսցես ընդ հրեշտակս ի դրունս ամենաւրհնեալ Աստուածածնին, անդ¹⁷¹ տարցես զնդանեալս յերկար ժամանակաց առ ոտս Տիրամաւրն եւ Աստուածածնին, զիմս պատմեսցես, զոր սաստկացեալ մեղաւք մահացոյց չարաժանի վիշապն: Եւ նորին աղաչանաւք ի վեր տանիցես զապականեալս ի մեղս, ուր հրաւիրեալքն են ընդ Փեսային երկնաւորի բերք բերուց եւ Հագարք Հագարաց, առաքեալք, մարգարէք, պէտք եւ իշխանութիւնք, աթոռք եւ Հայրապետութիւնք եւ անթիւք ընդ քեզ, Հայրապետք, վարդապետք, քահանայք, ճգնաւորք, միանձուներ սուրբք եւ առաքելիք եւ այլ բազումք յետոյ քան զքեզ, Հաճոյք եւ Հաճո[յ]ացեալք:

Իսկ ի յայսմ ամի ի մերում ժամանակի ընտիր եւ պատուական վարուք հրեշտակական, քաջակրան եւ սրբազան, մաքրեալ եւ երջանկացեալ, զոր ոչ կարեմ յայտնել զանունն վասն թերակատար մարդկան ի Հանդիսաւոր յանապատէ, ի հրեշտակաբնակ վայրէ, ի քրիստոսարեալ¹⁷² արանց, ի յաստուածընտիր Հովուաց, ի յաստուածուայոց բաբունեաց¹⁷³, ի հոգիամուլս¹⁷⁴ Հարանց միսթարութեան անուն Հանդերձ աշակերտեալ մանկամբք ընդ քեզ թագաւորեալ ի նաւահանգիստն խաղաղութեան: Զնոցին աղաւթսն մաղթողական եւ զքոյդ սրբանուէր ի մի խառնեսցես, եւ ազերս աղաչանաց տարածեսցես առ ոտս բարեաց պարգեւողին՝ թեթեւացուցանել զծանրութիւն բեռինս անաւրէնութեան: Ոչ ընդ արժանացեալսն դասիլ խնդրեմ եղկելի անձինս եւ ոչ ընդ Հաճոյացեալսն պսակիլ Հայցեմ մեղուցեալ հոգոյս, այլ հեռի լինել ի նոցանէ տասնեկին դրամբք եւ սակաւ մի թեթեւանալ ի տանջանաց:

Եւ դարձեալ ընդ քեզ կալցես յանձին զտարածամ ննջեցեալսն մեր, զփոխեցեալսն յաստի կենացս անխուճկ եւ աննուեր մատաղ մանկունք տղայական տիաւք հրաժարեալք ելին յաշխարհէ, ի քեզ ապաւինեալ դարձան ի հող, ուստի առեալ ածիցես ընդ առաջ Յիսուսի՝ պաղատանաւք ամենաւրհնեալ Աստուածածնին եւ քոին Համապատիւ ընտրեալ արանցն՝ շնորհել նոցայ Հանգիստ յաւթեւանս արդարոցն կատարելոցն եւ զիմս անտես արասցես

166 ընթեանրական:

167 բերով:

168 նենկաւիտեաց. ՉիքՆԲՆ:

169 զջաջախեալս:

170 զջաջախեալս:

171 անդ:

172 ՉիքՆԲՆ

173 լաբունեաց:

174 ՉիքՆԲՆ:

զբազում չարիսան, զի եւ եւս գտայց մասն բարի բարերարէն քօին պաղատանաւք. ես, որ գլուխ եմ մեղաւորաց, ես, որ անգամ եմ պոռնկաց, ես, որ բազուկ եմ անիրաւաց՝ ամենայն մեղաւք մահացեալս, ես, որ ապականեցի զտաճար Աստուծոյ եւ ապականեցայ ի նմանէ, ըստ գրեցելումն. չարագործս, պոռնիկս, անաւրէնս, անսուբբս, անմաքուրս, արդարութեան թշնամիս, սրբութեան ատելիս, սատակման որդիս, ժառանգս¹⁷⁵ Հրոյն յաւիտենականի: Մարգարէացան բազումք յառաջ ժամանակաւ վասն գալստեան Որդոյն Աստուծոյ մինչեւ եկն եւ կատարեաց զգործս աստուածային: Եւ վասն իմոյ անթիւ անաւրէնութեան խաւսեցեալ մարգարէական Հոգւով ոմն երջանիկ եւ փառաւոր անուն աստուածատեան Գրիգորիոս, զոր թէ ստուգել կամիս՝ յիւրում մատենին գտանես: Սա զամենայն, զոր ասաց, վասն իմ է, եւ յիս կատարին ասացեալք՝ սկսեալ ի նախնի մարդոյն մինչեւ ի սպառումն ծննդոց նորին: Այս յառաջ ծանուցեալ եղեւ նմայ ի Հոգւոյն Սրբոյ մինչեւ եկն եւ կատարեցաւ առ ամենամեղս կուտեալ անաւրէնութեանս:

Արդ, փութա վաղվաղակի եւ Հան զընկղմեալս¹⁷⁶ ի վիհս կորստեան, զի մի՛ տիրեսցէ չարութեան ծննդոյս մահն Հասարակաց եւ մեռուցէ զիս մահուամբն յաւիտենականաւ: Յայնժամ եղիլի գտանիմ ի մէջ երկնաւորաց եւ երկրաւորաց, զոր ոչ թիւ աւուրց կայ եւ ոչ Համարք ժամանակաց: Երթամ խառնիմ ընդ նմանիսն իմ, զոր ի կենդանութեան արարի սիրելի եւ ոչ ատելի. տանջեն եւ ոչ մեռանիմ, ճաղեն եւ ոչ սատակիմ, այրեն եւ ոչ սպառիմ, զի յաւիտենական է եւ մշտնջենաւոր: Կտտեն, ծծեն, լափեն, ուտեն մանրեն մահաբեր ժանիւքն եւ ոչ վախճանիմ¹⁷⁷. ես միայն մնամ սատակման արժանի եւ իրաւացի տանջիլ: Կանխեալ ժամանեալ առ իս, ըստ սովորականդ քում սիրոյ, եւ վերածեալ զկործանեալս ի կորստական գլորմանէս: Եւ յորժամ բազմաշահ տացես զՀամարս քան քարանցն, եւ կոչեսցիս «ծառայ բարի եւ Հաւատարիմ», ընդ իմում թշուառիս Հայցեալ անդորրութիւն, ի բազմայկսկիծ¹⁷⁸ Հարուածոցս, զի մի՛ մատնեցայց ի բերանոյ Արարչէն խաւարին արտաքնոյ¹⁷⁹ եւ Հրեղէն գետոցն յորժանաց եւ որդանցն անքունից: Զայս տեսեալ ոմն ի սրբոցն Նսայեաս ասէր, թէ՛ «Հուրն ողորմ ոչ շիջանի եւ որթն ողորմ ոչ մեռանի»¹⁸⁰: Եւ այլ ոմն ասէ. «Թէ արգարն Հագիւ կեցցէ՝ մեղաւորն եւ անբարիշտն ու՞ր երեւեսցի»¹⁸¹, ապա ես՝ կրկին անառակ որդիս ու՞ր երեւեցայց, յայտնեմ զտեղին, ցուցանեմ զվայրսն, զայն ասեմ ինձ բաժին, զոր անսրբոցն է պատրաստեալ կոծումն յաւիտենական եւ կրճտումն ատամանցն անՀանգուրժելի¹⁸², անմահ մահն եւ անանց պատուՀասն, զոր Հեծեծանաւք գոչեմ միշտ մեղուցեալս անպարտ մնալ ի յայն յաննեղելի եւ ի չարաչար Հարչարանացն, եւ մասնաւորիլ դասուցն երանականաց, Հանդերձ ամենայն ուղղայդաւան պաշտաւնեիւք՝ յանցաւորաւք եւ ազատեցելովք, աստ վայելել ճշմարիտ քաղաքաւարութեամբ, եւ անդ գերկնայինն ժառանգել զփառսն շնորհաւք Հաւրն բարերարի եւ մարգասիրութեամբ Որդոյն Միածնի եւ խնամաւք Հոգւոյն կենսատուի այժմ եւ միշտ եւ յաւիտենան յաւիտենից:

175 ժառանկս:

176 զընկղմեալս:

177 վաղճանիմ:

178 ՉիքՆԵՆ:

179 Միրթ. Ը 12, ԻԲ 13, ԻԵ 30:

180 Եսայի ԿԶ 24:

181 Առաւ. ԺԱ 31:

182 Միրթ. Ը 12, ԺԳ 42, 50, ԻԲ 13, ԻԴ 51, ԻԵ 30, Ղուկ. ԺԳ 25: